


Հ.Մ.Ը.Մ.ի  
ԱՐԵՎՄՏԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԻ  
ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ



## **ՅԱՌԱՋ ՆԱՀԱՏԱԿ**

**(ՔԱՅԼԵՐԳ Հ.Մ.Ը.Մ.Ի)**

Դաշնաւորում՝ Բ. ԿԱՆԱԶԵԱՆ

Յեղիսակ՝ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ

**Յառա՛ջ նահատակ ցեղի անմահնե՛ր,  
Վեց դարու անմոռ վրեժի գրահներ,  
Կատարն հայրենի լերանց հեռագոյն,  
Երթանք կոթողել դրօշակն եռագոյն:**

**Յսկայ նուիրման  
Տորմի՛ղ հըրաթել,  
Կամաւո՛ր բանակ,  
Յառա՛ջ անսասան,  
Յառաջ անդեղել,  
Դեպի յաղթանակ:**

**Վատին սեւ արիւն մեր հողն ոռոգեց,  
Տարագիր հայն իր կեանքը տորոգեց,  
Երեկ շղթայուած՝ այսօր ինքնավար,  
Յարեալ վեհօրէն դամբանէն խաւար:**

ՕՐԱԳԻՐ

# 1. ԱՆՈՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը անբաժան մասն է Միութեան ընդհանուր կառոյցին եւ անոր անդամները կը կոչուին Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներ:

Ծանօթ.- Այս կանոնագրին մէջ ՍԿԱՈՒՏ բառը կը վերաբերի հաւասարապէս տղոց եւ աղջկանց բաժիններուն:

Շրջանի սկաուտութիւնը կը կոչուի՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանի Սկաուտութիւն:

# 2. ՆՊԱՏԱԿ

Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտութեան նպատակն է.-

Ա) Պատրաստել ամուր նկարագրի եւ բարոյական բարձր արժանիքներու տէր, հաւատաւոր եւ անձնուէր հայեր՝ ծառայելու ազգին եւ հայրենիքին ու նուիրուելու հայ ժողովուրդի ձգտումներու իրագործումին:

Բ) Պատրաստել առողջ, չարքաշ ու արի անհատներ:

Գ) Զօրացնել իրենց մտային կարողութիւնները:

Դ) Զարգացնել իրենց մէջ պարտականութեան, պատասխանատուութեան եւ պատուի զգացումները, ինչպէս նաեւ՝ վեհանձնութեան եւ զոհողութեան ոգին:

Ե) Արթնցնել համագործակցութեան, ծառայասիրութեան, ընկերասիրութեան ոգին, պատրաստելով տիպար քաղաքացիներ:

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանի Սկաուտութիւնը առաւել ունի հետեւեալ նպատակը:

-Զարգացնել սկաուտներու Հայերէն լեզուն, Հայ մշակոյթը եւ Հայկական սովորութիւնները:

### 3. ՄԻՋՈՑՆԵՐ

- Հ.Մ.Ը.Մ.ը կը կազմէ սկաուտական խումբեր հայրենիքի եւ գաղութներու մէջ՝ իրագործելու համար իր սկաուտութեան նպատակները:

- Սկաուտներու ազգային, քաղաքացիական, ընկերային, սկաուտական դաստիարակութեան եւ որակաւոր ու կարող աստիճանաւորներու պատրաստութեան համար կը կազմակերպուին դասախօսութիւններ, դպրոց-բանակումներ, դասընթացքներ, արշաւներ, բանակումներ եւ համագումարներ:

Սկաուտներու ազգային, քաղաքացիական, ընկերային, մշակութային եւ սկաուտական դաստիարակութեան եւ որակաւոր ու կարող աստիճանաւորներու պատրաստութեան եւ Հանրօգուտ աշխատանքներ տանելու համար կը կազմակերպուին

- Ա.- Շաբաթական կանոնաւոր աշխատանքներ
- Բ.- Դասախօսութիւններ
- Գ.- Արշաւներ
- Դ.- Բանակումներ
- Ե.- Սկաուտական եւ Ազգային ձեռնարկներ
- Զ.- Դպրոց բանակումներ
- Է.- Այցելութիւններ, պտոյտներ եւ ճամբորդութիւններ:
- Ը.- Դասընթացքներ (Սկաուտական, Ազգային, Մասնագիտական եւ Հայերէն լեզուի):
- Թ.- Թերթերու եւ գիրքերու Հրատարակութիւններ:
- Ժ.- Շարժապատկերներու եւ սահիկներու ցուցադրութիւններ:
- ժա.- Մարմնակրթական աշխատանքներ:
- ժբ.- Միջ-Մասնաճիւղային աշխատանքներ:
- ժգ.- Համագումարներ
- ժդ.- Գեղարուեստական եւ Մշակութային աշխատանքներ
- ժե.- Հանրօգուտ ձեռնարկներ:

- Ծանօթացնելու համար սկաուտութիւնը եւ տարածելու համար անոր նպատակները.-

Ա) կը կազմակերպուին ծնողական հանդիպումներ, հրապարակային դասախօսութիւններ եւ ձեռնարկներ:

Բ) կը հրատարակուին գիրքեր եւ յօդուածներ՝ մամուլով:

Գ) Յատուկ աշխատանք կը տարուի սկաուտութիւնը ծանօթացնելու Հայ աշակերտութեան:

Ծանօթացնելու համար սկաուտութիւնը եւ տարածելու համար անոր նպատակները, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանի Սկաուտութիւնը կ'օգտագործէ նաեւ:

-Տեսաերիզներ, շարժապատկերներ, սահիկներ, համակարգիչներ եւ այլ նորագոյն միջոցներ:

Սկսուտական բոլոր գրաւոր եւ բանաւոր աշխատանքները կը կատարուին Չայերէն լեզուով:



# Կ Ա Ն Ո Ն Ա Ք Ի Ր



#### 4. ԱՆԴԱՍԱԿՑՈՒԹԻՒՆ

307. 501- (121) Հ.Ս.Ը.Մ.Ի սկաուտութեան կրնայ անդամակցիլ ամէն Հայ անհատ՝ մասնակցելով իր սեռին եւ տարիքին համապատասխան բաժանմունքին:
307. 502- Հ.Ս.Ը.Մ.Ի Սկաուտութեան կրնայ անդամակցիլ 6-18 տարեկան ամէն Հայ անհատ մասնակցելով իր սեռին եւ տարիքին համապատասխան սկաուտական բաժանմունքի միաւորին:
- 18 տարեկանէն վեր Հ.Ս.Ը.Մ.Ի անդամները կրնան մաս կազմել սկաուտական շարքերուն, պատասխանատուութիւն ունենալու պարագային միայն:
307. 503- (122) Թեկնածուն սկաուտական կազմին անդամ կը դառնայ մասնաճիւղի Վարչութեան համաձայնութեամբ կամ անոր նշանակած Սկաուտական Խորհուրդին հաստատումով:
307. 504- Հ.Ս.Ը.Մ.Ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանէն ներս բաժանմունք բառը կը գործածուի փոխան կազմի:
307. 505- Հ.Ս.Ը.Մ.Ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանէն ներս մասնաճիւղ մը կրնայ ունենալ Սկաուտական Խորհուրդ կամ Սկաուտական Վարիչ մարմին որոնք համահաւասար մարմիններ են:
307. 506.- (123) Հ.Ս.Ը.Մ.-ի սկաուտական կազմի իւրաքանչիւր անդամ կը վճարէ անդամավճար, որ կը ճշդուի մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կողմէ եւ կը հաստատուի Վարչութեան որոշումով:
307. 507- (124) Անդամակցիլ փափաքողը պէտք է ներկայացնէ գրաւոր դիմումնագիր մը, իր բնակած վայրի Հ.Ս.Ը.Մ.-ի մասնաճիւղի Վարչութեան կամ անոր նշանակած Սկաուտական Խորհուրդին: 18 տարեկանէն փոքր անհատները պէտք է ունենան ծնողքին հաւանութիւնը հաստատող դիմումնագիր մը, իսկ 18 տարեկան եւ ավելի վեր տարիք ունեցող անհատները պարտին ունենալ երկու երաշխաւորներ:
- Ծանօթ.-
- ա) Յիշեալ երաշխաւորները պէտք է նուազագոյնը երկու տարուան Հ.Ս.Ը.Մ.ական եղած ըլլան եւ ամբողջացուցած՝ 18 տարիքը:
  - բ) Փորձառական ժամանակաշրջանէ մը ետք, նորագիրը կը կատարէ իր խոստումը կամ երդումը, այնուհետեւ դառնալով անդամ այդ մասնաճիւղին:
  - գ) Հ.Ս.Ը.Մ.ի սկաուտական կազմի անդամը չի կրնար մաս կազմել այլ սկաուտական խումբերու:



307. 508- Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանէն ներս որեւէ անդամ որ կը փափաքի անդամակցիլ իր բնական վայրէն դուրս որեւէ մասնաճիւղի մը, պարտի յարգելի պատճառ ունենալ:
307. 509- Հ.Մ.Ը.Մ.ի անդամակցութեան ամէն մէկ դիմումնագրէն օրինակ մը կը փոխանցուի Շրջնային Վարչութեան:
307. 510- Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանի սկաուտութիւնը ինքնաբերաբար մաս կը կազմէ Ամէրիկեան Սկաուտութեան:
307. 511- (125) Խոստում կամ երդում կատարած նորագիրին կը տրուի անդամատետր՝ մասնաճիւղի Վարչութեան կամ անոր նշանակած Սկաուտական Խորհուրդին կնիքով եւ ստորագրութեամբ:
307. 512- Մասնաճիւղէ Մասնաճիւղ փոխանցուող սկաուտ մը պարտի փոխանցագիր ներկայացնել, մանրամասնելով Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական իր գործունէութեան պատկերը:
- 18 տարեկանէն վար սկաուտի մը փոխանցագիրը կը տրուի իր ծնողքի արտօնութեամբ:
307. 513- Այլ շրջանէ փոխանցուող սկաուտի մը կարգը, աստիճանը եւ պաշտօնը կը հաստատուի Շրջնային Վարչութեան կողմէ:
307. 514- Նորագիր սկաուտը կը մասնակցի ծանօթացման յայտագրի մը, իր մասնակցութեան առաջին ամսուայ ընթացքին:
- Ծանօթ -Ծանօթացման յայտագիրը կը պարունակէ Հ.Մ.Ը.Մ.ի իմաստը, նպատակն ու կառոյցը, Մասնաճիւղի բաժանմունքներն ու ներքին կանոնագրի բացատրութիւնը եւ սկաուտական բաժանմունքի կառոյցը:
307. 515- Խմբապետ եւ աւելի բարձր պաշտօն ունեցող սկաուտը իր բաժանմունքը ձգելէն առաջ պարտի գրաւոր նամակով տեղեակ պահել մասնաճիւղի Վարչութիւնը, Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը կամ Սկաուտական Վարիչ Մարմինը:
- Հրաժարականը կը քննուի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին եւ Մասնաճիւղի Վարչութեան կողմէ:
- Մասնաճիւղի Վարչութիւնը տեղեակ կը պահէ Շրջնային Վարչութեան, հրաժարուող միաւորի փոխ-խմբապետ եւ աւելի բարձր աստիճանաւորներու անունները:

307. 516- -Գայլիկ/արծուիկի խոստում կրնան կատարել այն անհատները, որոնք յաջողութեամբ ակարտած են կակուղ Թաթիկ կարգի գիտելիքներու քննութիւնները:

-Արի/Արեւոյշի խոստում կրնան կատարել այն անհատները որոնք յաջողութեամբ ակարտած են նորագիր կարգի գիտելիքներու քննութիւնները:

-Երէց/պարմանուհիի երդում կրնան կատարել այն անհատները որոնք յաջողութեամբ ակարտած են նախապատրաստական շրջան կարգի գիտելիքներու քննութիւնները:

-Խոստում կամ երդում կատարելէ ետք միայն, սկսուող կրնայ տարագին վրայ կրել իր խումբի պաշտօնական փողկապը (թաշկինակը):

-Նորագիր մը կրնայ արի կամ արեւոյշ ըլլալ, առանց գայլիկ կամ արծուիկ ըլլալու: 15 տարիքը անբողջացուցած նորագիր մը կրնայ առանց արի կամ արեւոյշ ըլլալու երէց կամ պարմանուհի ըլլալ:

## 5. ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐ

**Ծանոթ: -**

- ա) Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանէն ներս սկաուտական բաժանմունքը ունի սեռի եւ տարիքի համապատասխան բաժանումներ:
- բ) Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանի սկաուտական բաժանմունքէն ներս (բաժանում) բառը կը գործածուի փոխանակ (բաժանմունք) բառը սկաուտական ենթաբաժանմունքներու համար:

**ՅՕԴ. 517- (126)**    Զ.Մ.Ը.Մ.-ի սկաուտութիւնը ունի հետեւեալ երեք բաժանմունքները.-

Մանչերու յատուկ

Աղջիկներու յատուկ

Գայլիկ  
Արի  
Երէց

Արծուիկ  
Արենոյշ  
Պարմանուհի

**Ծանոթ. -**

- ա) Այս բաժանմունքները կը կատարուին հիմք ունենալով տարիքը: Գայլիկ, արի, արծուիկ եւ արենոյշ բաժանմունքները կարելի է ենթաբաժանումներու ենթարկել՝ տարեկիցները համախմբելով:
- բ) Այս բաժանմունքները կարելի է պատշաճեցնել երկրի տեղական սկաուտական տարիքային դասաւորումներուն:
- գ) Ըստ շրջաններու յարմարութեան, կրտսեր գայլիկներն ու արծուիկները (Յէն 6 տարեկան) կարելի է համախմբել նոյն խմբաւորումով՝ «Մոկլի» անունով: Մոկլիներու գործունէութիւնը ճշդելի է Ներքին Կանոնադրութեամբ:

**ՅՕԴ. 518-**    Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանի գայլիկներու եւ արծուիկներու բաժանումները ունին երկու ենթաբաժանումներ՝

Գայլիկ/արծուիկ ենթաբաժանում  
Փոքր-արի եւ փոքր-արենոյշ ենթաբաժանում

**ՅՕԴ. 519-**    Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանի սկաուտական բաժանումները կը կատարուին տարիքը հիմք ունենալով:

- ա) Գայլիկներու/արծուիկներու վոհմակ/երամը կը բաղկանայ 6էն 10 տար տարեկան անհատներէ:
- բ) Փոքր-արի/փոքր-արենոյշ վոհմակ/երամը կը բաղկանայ 10էն 11 տարեկան անհատներէ:

- զ) Արիններու/արենոյշներու խումբերը կը բաղկանան 11էն 15 տարեկան անհատներէ:
- դ) Երէցներու/պարմանուհիներու փաղանգները կը բաղկանան 15 տարիքը լրացուցած անհատներէ:

**Ծանօթ: -**

Մասնաճիւղ մը որ բաւարար (10-11) տարեկան սկաուտներ չունի կրնայ գայլիկներու վոհմակէն եւ/կամ արծուիկներու երամէն ներս վեցեակներ յատկացնել որոնց մէջ կը համախմբուին փոքր-արի ու փոքր-արենոյշները եւ կը տանին իրենց տարիքի յատուկ աշխատանքները:

**307. 520-** 10 տարիքը լրացնող (գայլիկ/արծուիկ)ը կը փոխանցուի գայլիկներու փոքր-արի/փոքր-արենոյշ շարքերը:

11 տարիքը լրացնող (փոքր-արի)/(փոքր-արենոյշ)ը կը փոխանցուի արի/արենուշներու շարքերը:

15 տարիքը լրացնող արի/արենոյշը կը փոխանցուի երէց-պարմանուհիներու շարքերը եթէ պատասխանատու պարտականութիւններ չի կատարեր սկաուտական բաժանմունքէն ներս:

**307. 521-** Մասնաճիւղէն ներս ամէն տեսակի փոխանցում, խոստում կամ երդում պէտք է վաւերացուի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կամ Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմնի կողմէ, եւ առ ի տեղեկութիւն փոխանցուի մասնաճիւղի Վարչութեան:

**307. 522-** Սկաուտը, որ չի փափաքիր շարունակել սկաուտութիւնը, (127) Վարչութեան հաստատումով կը փոխանցուի մասնաճիւղի անդամական ոչ-տարազաւոր շարքերուն:

**307. 523-** 18 տարիքը ամբողջացուցած սկաուտը կրնայ մասնակցիլ (128) մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովին, Կանոնագրով ճշդուած բոլոր իրաւունքներով:

**ԾԱՆՕԹ.-** 16-18 տարեկան սկաուտը կրնայ մասնակցիլ մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովին որպէս ունկնդիր:

## 6. ԿԱՐԳԵՐ

307. 524- (129) Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը ունի հետեւեալ կարգերը, որոնք դաստիարակչական աշխատանքի հանգրուաններ են՝ հիմնուած սկաուտներու աստիճանաբար զարգացող մարմնային եւ մտային կարողութեանց վրայ.-

**ա) Գայլիկներ կամ Արծուիկներ**

- 1.- Կակուղ Թաթիկ
- 2.- Միաստղ
- 3.- Երկաստղ

**բ) Արիներ կամ Արեւոյշներ**

- 1.- Նորագիր
- 2.- Նորընծայ
- 3.- Երկրորդ կարգ - (Բ. կարգ)
- 4.- Առաջին կարգ - (Ա. կարգ)
- 5.- Վկայեալ կարգ

**գ) Երեցներ եւ Պարմանուհիներ**

- 1.- Նախապատրաստական շրջան
- 2.- Մարզումի շրջան
- 3.- Ընդհանուր ծառայութեան շրջան
- 4.- Վկայեալ կարգ
- 5.- Արարատեան կարգ.

**դ) Խմբապետներ եւ Խմբապետուհիներ**

- 1.- Արարատեան կարգ

Ծանօթ 1.- Սկաուտական բոլոր կարգերն ու գիտելիքները կարելի է պատշաճեցնել երկրի տեղական պայմաններուն, բացի Արարատեան կարգէն, որուն նախապայմանները կ'որոշէ Կեդրոնական Վարչութիւնը եւ առ ի՝ գործադրութիւն կը յղէ զանոնք շրջաններուն:

Արարատեան կարգի պայմանները ամբողջացուցած անհատին անունը Շրջանային Վարչութեան կողմէ կը յղուի Կեդրոնական Վարչութեան համապատասխան կարգը ստանալու համար:

Ծանօթ 2.- Սկաուտաան շարքերու բոլոր անդամները կրնան WOOD BADGEի մասնագիտական քննութիւն անցնել իրենց բնական երկրի Ֆետերասիոնի կողմէ ճշդուած պայմաններով:

307. 525- Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանի սկաուտութեան փոքր-արի/փոքր-արեւոյշ ենթաբաժանումը ունի «Փոխանցման» կարգը:



Փոխանցման կարգ

307. 526- Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանի Վերոյիշեալ կարգերը, ունին իրենց գրքոյկները, պատրաստուած՝ Շրջանային Վարչութեան կողմէ եւ վաւերացուած՝ Կեդրոնական Վարչութեան կողմէ:

-կարգի մը գրքոյկը կը պարունակէ այդ կարգին պայմաններն ու գիտելիքները:

## 7. ԽՈՍՏՈՒՄ, ԵՐԴՈՒՄ, ԴԱԲԱՆԱՆՔ, ՆՇԱՆԱԲԱՆ, ՆՇԱՆԱԿ

307. 527- (130) Կակուղ թաթիկի գիտելիքները յաջողութեամբ իւրացուցած գայլիկը կամ արծուիկը կը կատարէ հետեւեալ խոստումը.-
- «Կը խոստանամ ընել կարելիս՝ հաւատարիմ ըլլալու Աստուծոյ, Յայրենիքիս, ծնողքիս եւ վոհմակի (երամի) օրէնքին: Գործել բարիք մը ամէն օր»:
- Վոհմակի օրէնքն է.-
- 1.- Գայլիկը մտիկ կ'ընէ Ծեր Գայլը:
  - 2.- Գայլիկը ինքզինքը մտիկ չ'ըներ:
  - 3.- Գայլիկը մաքուր հայերէն կը խօսի:
- Երամի օրէնքն է.-
- 1.- Արծուիկը մտիկ կ'ընէ Արծիւը:
  - 2.- Արծուիկը ինքզինք մտիկ չ'ըներ:
  - 3.- Արծուիկը մաքուր հայերէն կը խօսի:
307. 528- Փոխանցման գիտելիքները յաջողութեամբ իւրացուցած փոքր-արին կամ փոքր-արենոյշը կը կատարէ հետեւեալ խոստումը:-
- «Կը խոստանամ ընել կարելիս՝ հաւատարիմ ըլլալու Աստուծոյ, Յայրենիքիս, ծնողքիս եւ վոհմակի (երամի) օրէնքին: Գործել բարիք մը ամէն օր»:
- Վոհմակի օրէնքն է.-
- 1.- փոքր-արին մտիկ կ'ընէ Ծեր Գայլը:
  - 2.- փոքր-արին ինքզինքը մտիկ չ'ըներ:
  - 3.- փոքր-արին մաքուր հայերէն կը խօսի:
- Երամի օրէնքն է.-
- 1.- փոքր-արենոյշը մտիկ կ'ընէ Արծիւը:
  - 2.- փոքր-արենոյշը ինքզինք մտիկ չ'ըներ:
  - 3.- փոքր-արենոյշը մաքուր հայերէն կը խօսի:
- Ծանօթ. Գայլիկ/Արծուիկի եւ փոքր-արի/փոքր-արենոյշի խոստումը նոյնն է, որը կը կատարուի մէկ անգամ:
307. 529- (131) Նորագիրի գիտելիքները յաջողութեամբ իւրացուցած արին կամ արենոյշը կը կատարէ հետեւեալ խոստումը.

Հ.Մ.Ը.Մ.ի արհիմն խոստումը.-

«Կը խոստանամ ըլլալ հաւատարիմ Աստուծոյ եւ ծառայել Ազգիս ու  
Հայրենիքիս:

-Միշտ օգնել ուրիշին եւ գործել իբրեւ պարտականութեան գիտակից,  
արի եւ վեհանձն մարդ:

-Հնազանդիլ Հ.Մ.Ը.Մ.ի արհմերու դաւանանքին»:

Հ.Մ.Ը.Մ.ի արեւոյշին խոստումը.-

«Կը խոստանամ ըլլալ հաւատարիմ Աստուծոյ եւ ծառայել Ազգիս ու  
Հայրենիքիս:

-Միշտ օգնել ուրիշին եւ գործել իբրեւ պարտականութեան գիտակից,  
արի եւ վեհանձն մարդ:

-Հնազանդիլ Հ.Մ.Ը.Մ.ի արեւոյշներու դաւանանքին»:

Հ.Մ.Ը.Մ.ի արհմերու եւ արեւոյշներու դաւանանքն է.-

- 1.- Արհիմն - Արեւոյշին - խօսքը նուիրական է:
- 2.- Արհն - Արեւոյշը - հնազանդ է:
- 3.- Արհն - Արեւոյշը - հաւատարիմ եւ ուղղամիտ է:
- 4.- Արհն - Արեւոյշը - միշտ կ'օգնէ ուրիշին:
- 5.- Արհն - Արեւոյշը - բարեկամ է բոլորին եւ եղբայր (քոյր) ուրիշ սկաուտի՝  
առանց ընկերային կարգի խտրութեան:
- 6.- Արհն - Արեւոյշը - բարեկիրթ է:
- 7.- Արհն - Արեւոյշը մաքուր հայերէն կը խօսի ամէն ատեն եւ ամէն տեղ:
- 8.- Արհն - Արեւոյշը - անասուններ եւ բոյսեր կը սիրէ եւ կը պաշտպանէ:
- 9.- Արհն - Արեւոյշը - միշտ զուարթ եւ խանդավառ է:
- 10.- Արհն - Արեւոյշը - աշխատասէր եւ կորովի է:
- 11.- Արհն - Արեւոյշը - տնտեսող է:
- 12.- Արհն - Արեւոյշը - մաքուր է մտածումով, խօսքով եւ գործով:

Յօդ. 530- Նախապատրաստական շրջանի գիտելիքները յաջողութեամբ  
(132) իւրացուցած երէցը կամ պարմանուհին կը կատարէ հետեւեալ երդումը.-

«Կ'երդնում պատուոյս վրայ

-Հաւատարիմ մնալ Հ.Մ.Ը.Մ.ի Ծրագիր-Կանոնագրին եւ սկաուտութեան  
սկզբունքներուն ու օրենքներուն:

-Ծառայել Ազգիս, Հայրենիքիս եւ աշխատիլ Հայ ժողովուրդի  
իրաւունքներուն իրագործման:

-Պայքարիլ այլասերման եւ ապազգայնացման դեմ՝ պահպանելով հայ  
լեզուն, հայ մշակոյթը եւ ազգային նկարագիրը»:



307. 531- Միջազգային սկաուտութեան նշանաբանն է. «Միշտ Պատրաստ»:  
(133) Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանն է. «Բարձրացիր-Բարձրացուր»:  
Գայլիկինը եւ արծուիկինը՝ «Լաւագո՛յն», արիին եւ արեւոյշիկինը՝ «Միշտ Պատրաստ», երեցինը եւ պարմանուհիինը՝ «Ծառայո՛ղ»:
307. 532- Փոքր արի/փոքր արեւոյշի նշանաբանն է գայլիկ/Արծուիկի նման «Լաւագո՛յն»
307. 533- Խոստում կատարած Հ.Մ.Ը.Մ.ի գայլիկը եւ փոքր-արին պարտաւոր է իր գլխարկին վրայ կրել գայլի հետեւեալ նշանը:
307. 534- Խոստում կատարած Հ.Մ.Ը.Մ.ի արծուիկը եւ փոքր-արեւոյշը պարտաւոր է իր գլխարկին վրայ կրել արծիւի հետեւեալ նշանը:

307. 535- (134) Խոստում կամ երդում կատարած Հ.Մ.Ը.Մ.ի արին, արենոյշը, երեցը կամ պարմանուհին իր գլխարկին վրայ կը կրէ Հ.Մ.Ը.Մ.ի Նշանակը եւ տարագին վրայ սկաուտական Շուշանածաղիկը:



Հ.Մ.Ը.Մ.ի Շուշանածաղիկը



Հ.Մ.Ը.Մ.ի Նշանակը

307. 536- (135) Նորագիրը խոստում կամ երդում կատարելէ ետք, իրաւունք կը ստանայ իր տարագին հետ կրելու փողկապ եւ գլխարկ ու մասնակցելու սկաուտական պաշտօնական արարողութիւններուն:

## 8. ԴՐՕՇԱԿՆԵՐ



Հ. Մ. Բ. Մ.ի Դրօշակը



Հ. Մ. Բ. Մ.ի Սկաուտական  
Դրօշակը

307. 537- Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանէն ներս, Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակը, Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան դրօշակը եւ մասնաճիւղի սկաուտական բաժանմունքի (կազմ) դրօշակը կ'ըլլան (վեց ոտքով չորս ոտք) մեծութեամբ. իսկ սկաուտական իւրաքանչիւր բաժանումի (միաւոր կամ խումբ) դրօշակը կ'ըլլայ (հինգ ոտքով երեք ոտք) մեծութեամբ:

307. 538- (136) Իւրաքանչիւր մասնաճիւղի սկաուտական կազմը կ'ունենայ իր դրօշակը՝ նման Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական դրօշին, 120 սմ. x 90 սմ. մեծութեամբ, մասնաճիւղին գոյնով, որ կը ճշդուի Շրջանային Վարչութեան կողմէ: Դրօշակին վրայ կը գրուի մասնաճիւղին անունը հայերէնով եւ բնակած երկրին լեզուով:




6 ոտք

4 ոտք


307. 539- Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանի բոլոր մասնաճիւղերու սկաուտական բաժանմունքերու դրօշակներու գոյները նման է Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան դրօշակին գոյներուն:

307. 540- Սկաուտական իւրաքանչիւր միաւոր կ'ունենայ միաւորի դրօշակ (հինգ ոտքով երեք ոտք) մեծութեամբ, Մասնաճիւղի որոշած գոյներով: Դրօշակը կը կրէ Մասնաճիւղի անունը, միաւորի անունն ու նշանը:



30Դ. 541- (137) Սկաուտական իւրաքանչիւր բաժանմունք կ'ունենայ իր դրօշակը՝ 90սմ. x 67սմ. մեծութեամբ, մասնաճիւղին գոյնով: Դրօշակին վրայ կը գրուի մասնաճիւղին անունը եւ բաժանմունքին թիւը կամ անունը հայերէնով եւ բնականօրէն երկրին լեզուով:

30Դ. 542- Սկաուտական իւրաքանչիւր խումբ կ'ունենայ իր դրօշակը (հինգ ոտքով երեք ոտք) մեծութեամբ, խումբի փողկապի (թաշկինակ) գոյնով: Դրօշակին վրայ կը դրուի Մասնաճիւղին անունը եւ խումբին թիւը կամ անունը Հայերէնով:



30Դ. 543- Գայլիկներու կամ արծուիկներու իւրաքանչիւր վեցեակ կ'ունենայ վեցեակի գոյնով եռանկիւն դրօշակ մը, վոհմակի կամ երամի որոշումով եւ մասնաճիւղի սկաուտական խորհուրդի կամ Սկաուտական Վարիչ Մարմնի վաւերացումով: Դրօշակը կը կրէ վոհմակին կամ երամին թիւը, նաեւ գայլին նշանը:

30Դ. 544- (Փոքր-արի) Գայլիկներու կամ (փոքր-արեւոյշ) Արծուիկներու իւրաքանչիւր վեցեակ կ'ունենայ վեցեակի գոյնով եռանկիւն դրօշակ մը, վոհմակի կամ երամի որոշումով եւ մասնաճիւղի Սկաուտական խորհուրդի կամ Սկաուտական Վարիչ Մարմնի վաւերացումով: Դրօշակը կը կրէ վոհմակին կամ երամին թիւը, նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի շուշանածաղիկը:

307. 545- Արհներու կամ արենոյշներու իւրաքանչիւր խմբակ կ'ունենայ խմբակի դրօշակը, խումբի որոշումով եւ Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կամ Սկաուտական Վարիչ Մարմնի Վաւերացումով:  
Դրօշակը կը կրէ խումբի թիւը եւ խմբակի նշանը:

307. 546- Երէցներու կամ Պարմանուհիներու իւրաքանչիւր տասնեակ կ'ունենայ փողկապի (թաշկինակի) գոյնով քառակուսի դրօշակ մը՝ երկու ոտքով երկու ոտք մեծութեամբ, փաղանքի որոշումով եւ մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կամ Սկաուտական Վարիչ Մարմնի վաւերացումով: Դրօշակը կը կրէ փաղանքին պատմական անունը, տասնեակին պատմական անունը եւ տասնեակի պատմական անունը ներկայացնող նշան մը:

**307. 547- Մասնաճիւղերու բոլոր դրօշակները կը պատրաստուին Շրջանային Վարչութեան կողմէ, դրօշակներու նմանութիւնը պահելու համար:  
Մասնաճիւղերը կը հոգան դրօշակներու ծախսերը:**

## 9. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

307. 548.- Չ.Ս.Ը.Ս.ի սկաուտութիւնը ունի հետեւեալ վարչական  
(138) բաժանումները.-

### Ա.- ՄԱՐՄԻՆՆԵՐ

- ա) Շրջանային Սկաուտական Խորհուրդ
- բ) Մեկուսի Շրջանի Սկաուտական Խորհուրդ
- գ) Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդ:

### Բ.- ԺՈՂՈՎՆԵՐ

- ա) Համա-Չ.Ս.Ը.Ս.-ական Խմբապետական Համագումար
- բ) Մասնաճիւղերու Խմբապետներու Ընդհանուր Ժողով:

307. 549- Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանէն ներս Չ.Ս.Ը.Ս.-ի  
սկաուտութիւնը առաւել ունի հետեւեալ մարմինները:-

- ա) Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմին
- բ) Միաւորի Խմբապետական Մարմին  
Կազմակերպչական Միաւորի Մարմին:  
Դաստիարակչական Միաւորի Մարմին:
- գ) Խումբի Վարիչ Մարմին:

### Ծանօթ

- ա- Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանէն ներս Մասնաճիւղի  
Սկաուտական Վարիչ Մարմինը կրնայ փոխարինել Մասնաճիւղի  
Սկաուտական Խորհուրդը. (Տես Յօդ. 505)
- բ- Վերոյիշեալ Մարմինները նշուած են նուիրապետական կարգով:

307. 550- Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանէն ներս Չ.Ս.Ը.Ս.-ի  
Սկաուտութիւնը ունի հետեւեալ յաւելեալ ժողովները:-

- ա) Մասնաճիւղի Խմբապետական ընդհանուր ժողով:
- բ) Մասնաճիւղի Սկաուտական Խումբերու Վարիչ Մարմիններու ժողով:
- գ) Մասնաճիւղի աստիճանաւորական ժողով:
- դ) Մասնաճիւղի սկաուտական ընդհանուր ժողով:
- ե) Միաւորի Խումբերու վարիչ Մարմիններու ժողով:
- զ) Միաւորի Աստիճանաւորական ժողով:
- է) Միաւորի Ընդհանուր ժողով:
- ը) Խումբի աստիճանաւորական ժողով:
- թ) Խումբի ժողով:
- ժ) Խմբակի առաջնորդ/առաջնորդուհի եւ փոխ առաջնորդ/փոխ  
առաջնորդուհիի ժողով:



- ժա) Խմբակի ժողով:
- ժբ) Օժանդակ Սկաուտական կազմերու ժողով:
- ժգ) Ծնողական ժողով:

ՅՕԴ. 551- Բոլոր մարմինները կ'ունենան իրենց հերթական ժողովները, որոնց օրակարգերը կը ճշդուին համաձայն իրենց պարտականութիւններուն եւ աշխատանքներուն:

## 10. ՄԱՐՄԻՆՆԵՐ

### ա) ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

#### ԿԱԶՄ

- 30Դ. 552- (139) Զ.Ս.Ը.Մ.ի Շրջանային Սկաուտական Խորհուրդը կը նշանակուի Զ.Ս.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան կողմէ եւ կը գործէ Շրջանային Վարչութեան գործունէութեան ժամանակաշրջանի տեւողութեան:
- 30Դ. 553- (140) Շրջանային Սկաուտական Խորհուրդը կը բաղկանայ սկաուտական գործերու լաւատեղեակ 5-7-9-11 Զ.Ս.Ը.Մ.-ականներէ: Այս թիւին մաս կը կազմեն Շրջանային Ընդհանուր Խմբապետը կամ Խմբապետուհին, Շրջանային Խմբապետը եւ Շրջանային Խմբապետուհին:
- 30Դ. 554- Շրջանային Սկաուտական Խորհուրդի մնացեալ անդամները կը նշանակուին Շրջանային փոխ-խմբապետներ եւ Շրջանային փոխ-խմբապետուհիներ:
- 30Դ. 555- (141) Շրջանային Սկաուտական Խորհուրդը կը կազմէ իր դիւանը: (Տարազաւորը մաս չի կազմեր դիւանին):
- 30Դ. 556- (142) Շրջանային Վարչութեան սկաուտական ներկայացուցիչը ի պաշտօնէ կը մասնակցի Շրջանային Սկաուտական Խորհուրդի ժողովներուն:
- 30Դ. 557- (143) Շրջանային Սկաուտական Խորհուրդի անդամներուն թիւը եւ նստավայրը կը ճշդէ Շրջանային Վարչութիւնը:
- 30Դ. 558- Շրջանային Սկաուտական Խորհուրդի անդամները կ'ունենան իրենց սկաուտական տարազը:
- Ծանօթ
- ա) Արեւմտեան Սիացեալ Նահանգներու շրջանէն ներս, Զ.Ս.Ը.Մ.ի բոլոր սկաուտները անդամ են Ամերիկեան սկաուտութեան (BSA).
  - բ) Ամերիկեան սկաուտութեան բոլոր անդամները ներարեալ ղեկավարները տարազաւոր են:
  - գ) Շրջանային Սկաուտական Խորհուրդի դիւանի անդամները տարազաւոր են:
- 30Դ. 559- Շրջանային Սկաուտական Խորհուրդը կ'ունենայ իր դաստիարակչական եւ կազմակերպչական կազմերը, որոնց պատասխանատուները կը նշանակուին Շրջանային Սկաուտական Խորհուրդի անդամներէն, այս երկու կազմերը կ'ունենան իրենց աշխատանքներու կանոնները:

## ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

307. 560- (144) Շրջանային Սկաուտական Խորհուրդը կը պատրաստէ իր գործունէութեան ծրագիրը, զոր կը ներկայացնէ Շրջանային Վարչութեան՝ առ ի վաւերացում:
307. 561- Շրջանային Սկաուտական Խորհուրդը առաջնորդելով շրջանի ներկայացուցչական ժողովի վորոշումներէն եւ Շրջանային Վարչութեան տուած ուղղութեամբ, կը պատրաստէ իր երկամեայ գործունէութեան Նիւթաբարոյական յայտագիրը զոր կը ներկայացնէ Շրջանային Վարչութեան առ ի վաւերացում:
307. 562- (145) Շրջանային Սկաուտական Խորհուրդը կը վարէ շրջանի սկաուտական ընդհանուր աշխատանքները, կը հսկէ շրջանի սկաուտական գործունէութիւններուն, համաձայն Սկաուտական Ներքին Կանոնագրի տրամադրութեանց եւ Շրջանային Ներկայացուցչական ժողովի որոշումներուն:
307. 563- Շրջանային Սկաուտական Խորհուրդը կը կազմակերպէ շրջանային ընդհանուր բանակում:
307. 564- Շրջանային Սկաուտական Խորհուրդը կը կազմակերպէ խմբապետական դպրոց-բանակումներ:
307. 565- (146) Շրջանային Սկաուտական Խորհուրդը կը գումարէ հերթական ժողովներ: Նիստերու վաւերացուած ատենագրութիւններու պատճէնը կը փոխանցէ Շրջանային Վարչութեան:
307. 566- (147) Շրջանային Սկաուտական Խորհուրդը կրնայ հրատարակել սկաուտական թերթ, կամ սկաուտական գիրքեր, Շրջանային Վարչութեան հաւանութեամբ եւ Կեդրոնական Վարչութեան արտօնութեամբ:

## ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆ

307. 567- (148) Շրջանային Սկաուտական Խորհուրդէն ներկայացուցիչ մը խորհրդակցական ձայնով կը մասնակցի Զ.Մ.Ը.Մ.-ի Շրջանային Ներկայացուցչական ժողովին:
307. 568- (149) Շրջանային Սկաուտական Խորհուրդը մասնաճիւղերու Վարչութիւններուն հետ իր թղթակցութիւնները կը կատարէ Շրջանային Վարչութեան միջոցաւ:

**307. 569-** **Շրջանային Սկաուտական Խորհուրդի ռեւէ անդամ կրնայ մասնակցիլ Մասնաճիւղի մը սկաուտական Խորհուրդի կամ Սկաուտական Վարիչ Մարմնի նիստերուն, Խորհրդակցական ծայնով:**

### **ՊԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ**

**307. 570-** **(150)** **Շրջանային Սկաուտական Խորհուրդը ի պահանջեալ հարկին կը գործէ իր գտնուած երկրի սկաուտական կանոնագրութեան տրամադրութեանց համաձայն:**

**307. 571-** **(151)** **Շրջանային Սկաուտական Խորհուրդը երկրէն դուրս բանակում, արշաւ, շրջապտոյտ, դասընթացք կազմակերպելու պարագային, պարտի Շրջանային Վարչութեան եւ Կեդրոնական Վարչութեան արտօնութիւնը առնել, գործնական քայլերու դիմելէ առաջ: Ապա ձեռնարկի աւարտին պարտի գրաւոր տեղեկագիր (բարոյական եւ նիւթական) ներկայացնել Շրջանային Վարչութեան եւ Կեդրոնական Վարչութեան:**

**307. 572-** **(152)** **Շրջանային Սկաուտական Խորհուրդը իր հաշիւները կը պահէ կանոնաւոր եւ օրինաւոր հաշուական տոմարներով: Իր գործունէութեան աւարտին նիւթաբարոյական տեղեկագիրը կը ներկայացնէ Շրջանային Վարչութեան:**

**307. 573-** **(153)** **Շրջանային Ներկայացուցչական Ժողովը կը ճշդէ Շրջանային Սկաուտական Խորհուրդի Նիւթական պիւտճէն, զոր կը հայթայթէ Շրջանային Վարչութիւնը:**

**307. 574-** **(154)** **Շրջանային Վարչութենէն Շրջանային Սկաուտական Խորհուրդ նիւթական փոխանցումները կը կատարուին Շրջանային Սկաուտական Խորհուրդի ներկայացուցած նախահաշիւներու հիման վրայ, իւրաքանչիւր գլուխի համար առանձին:**

**307. 575-** **Շրջանային Սկաուտական Խորհուրդը կը քննէ իւրաքանչիւր Մասնաճիւղէ ստացած տարեկան սկաուտական յայտագիրը:**

**307. 576-** **Շրջանային Սկաուտական Խորհուրդը նախգան իր շրջանի աւարտը, սկաուտական աշխատանքներու յայտագիր մը կը մշակէ որը կը փոխանցուի յաջորդող շրջանային սկաուտական Խորհուրդին իբրեւ ուղեցոյց:**

### **բ) ՄԵԿՈՒՄԻ ՇՐՋԱՆԻ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**307. 577-** **(155)** **Մեկուսի Շրջանի Սկաուտական Խորհուրդի կազմը, պարտականութիւնը, պարտաւորութիւնն ու իրաւասութիւնը կը նոյնանայ Շրջանային Սկաուտական Խորհուրդի սահմանուած յօդուածներու հասկացողութեամբ:**

Ծանօթ Այս կանոնագրութեամբ՝ այն բոլոր յօդուածներուն մէջ, ուր արձանագրուած է Շրջանային Սկաուտական Խորհուրդի անունը կը համապատասխանէ նաեւ Մեկուսի Շրջաններու Սկաուտական Խորհուրդներուն:

#### գ) ՄԱՍՆԱԾԻՂԻ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

##### ԿԱԶՄ

307. 578- (156) Մասնաճիւղի Վարչութիւնը պարտի նշանակել Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդ, որուն կազմը, պարտականութիւնը, պարտաւորութիւնն ու իրաւասութիւնը կը ճշդուին իր շրջանի Ներքին Կանոնագրութեամբ:
307. 579- Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը կը նշանակուի Մասնաճիւղի Վարչութեան կողմէ եւ կը գործէ Մասնաճիւղի Վարչութեան գործունէութեան ժամանակաշրջանի տեւողութեան:
307. 580- Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը կը բաղկանայ սկաուտական գործերու լաւատեղեակ եւ 20 տարիքը ամբողջացուցած 5-11 անդամներէ, որոնք կրնան ըլլալ անցեալի սկաուտ խմբապետներ կամ շրջանի սկաուտական պատասխանատուներ եւ սկաուտական գործի ձեռնհաս Հ.Մ.Ը.Մ.ականներ: Այս թիւին մաս կը կազմեն Մասնաճիւղի խմբապետ/ խմբապետուհին, Մասնաճիւղի փոխ-խմբապետ/խմբապետուհիները եւ միաւորներու խմբապետ/խմբապետուհիները:
- Ծանօթ- 20 տարիքը լրացնելը պայման չէ վերոյիշեալ շարքային սկաուտներուն համար:
307. 581- Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը կը կազմէ իր դիւանը հետեւեալ ձեւով:
- ա. Ատենապետ
  - բ. Ատենադպիր
  - գ. Գանձապահ
- Ծանօթ- Մասնաճիւղի խմբապետը իրաւունք ունի ընտրուելու դիւանի ատենապետ:
307. 582- Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի անդամներու թիւը եւ նստավայրը կը ճշդէ Մասնաճիւղի Վարչութիւնը:
307. 583- Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի անդամները կ'ունենան իրենց սկաուտական տարազը:

307. 584- Մասնաճիւղի Վարչութիւնը իր կողմէ նշանակուած Սկաուտական Խորհուրդի կազմի անուանացանկը պէտք է ներկայացնէ Շրջանային Վարչութեան՝ առ ի վաւերացում:

### ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

307. 585- Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը առաջնորդուելով Մասնաճիւղի անդամական Ընդհանուր Ժողովի որոշումներով եւ Մասնաճիւղի Վարչութեան տուած ուղղութեամբ ու հիմնուելով Շրջանի սկաուտական ներքին Ծրագիր կանոնագրին վրայ, կը պատրաստէ իր տարեկան գործունէութեան ծրագիրը, զոր կը ներկայացնէ Մասնաճիւղի Վարչութեան՝ առ ի վաւերացում, որուն օրինակը կը դրկէ Շրջանային Վարչութեան:

307. 586- Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը կը վարէ Մասնաճիւղի սկաուտական ընդհանուր աշխատանքները, նաեւ կը հսկէ Մասնաճիւղի սկաուտական խումբերու գործունէութեան վրայ, համաձայն Շրջանի սկաուտական ներքին կանոնագրի տրամադրութեանց, եւ մասնաճիւղի ընդհանուր ժողովի որոշումներուն: Մասնաճիւղի սկաուտական ընդհանուր բոլոր աշխատանքները կը ղեկավարուին Մասնաճիւղի խմբապետին կողմէ:

307. 587- Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը կը գումարէ հերթական ժողովներ: Նիստերու ատենագրութիւնները կը դրկէ Մասնաճիւղի Վարչութեան:

307. 588- Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը կը հսկէ Մասնաճիւղի սկաուտական դաստիարակչականի եւ կազմակերպչականի միաւորներուն աշխատանքներուն, համաձայն Շրջանի սկաուտական դաստիարակչական եւ կազմակերպչական միաւորներու աշխատանքներու կանոններու տրամադրութեանց:

307. 589- Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը կը գործակցի Մասնաճիւղի սկաուտ խմբապետներու հետ, կազմակերպելու՝ բանակումներ եւ դպրոց-բանակումներ, դաստիարակելու համար Մասնաճիւղի սկաուտ անհատներն ու աստիճանաւորները, նաեւ պատրաստելու՝ նորագրի, Նորընծայի եւ Բ. ու Ա. կարգերու սկաուտներ:

Սկաուտական Խորհուրդը կը գործակցի կազմակերպելու համար ընդհանուր Հաւաքոյթներ, արշաւներ, ծնողական հանդիպումներ եւ կ'օժանդակէ Մասնաճիւղի սկաուտական շարժումի վերելքին:

307. 590- Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը իր կատարած ձեռնարկներու մասին (հանդէս, բանակում եւ այլն) պարտի գրաւոր Նիւթաբարոյական

տեղեկագիր ներկայացնել Մասնաճիւղի Վարչութեան եւ բարոյական տեղեկագրէն օրինակ մը Շրջանային Վարչութեան:

307. 591- Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը ոչ Հ.Ս.Ը.Ս.ական սկաուտական խումբերու եւ պաշտօնական Մարմիններու հետ շփում հաստատելէ առաջ, արտօնութիւն կը ստանայ Մասնաճիւղի Վարչութենէն որ իր կարգին տեղեակ կը պահէ Շրջանային Վարչութիւնը:

Ծանօթ- Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը այլ Մասնաճիւղի մը Սկաուտական Խորհուրդին հետ իր կապը կը պահէ Մասնաճիւղի Վարչութեան խողովակով եւ Շրջանային Վարչութեան միջոցաւ:

307. 592- Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը կը վաւերացնէ ու կը համադրէ Մասնաճիւղի սկաուտական ենթաբաժանումներու ծրագիրներն ու աշխատանքները եւ կը հետեւի անոնց գործադրութեան:

307. 593- Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը, իր արխիւներուն մէջ կը պահէ սկաուտներուն անհատական եւ սկաուտական տեղեկութիւնները:

Ծանօթ- Սկաուտական տեղեկութիւնները կը ընդգրկեն՝  
-Անուն  
-Մականուն  
-Հասցէ  
-Անդամակցութեան թուական  
-Մասնաճիւղ  
-Սկաուտական կարգ  
-Աստիճան  
-Պաշտօն

## ԻՐԱԿԱՍՈՒԹԻՒՆ

307. 594- Բ. եւ Ա. կարգի քննութիւնները կը կազմակերպուին Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կողմէ:

307. 595- Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը, Շրջանային Սկաուտական Խորհուրդին հետ իր թղթակցութիւնները կը կատարէ Մասնաճիւղի Վարչութեան միջոցաւ եւ Շրջանային Վարչութեան խողովակով:

## ՊԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

307. 596- Մասնաճիւղ մը, իր Սկաուտական Խորհուրդի հսկողութեամբ, ամէն շաբաթ պարտաւոր է սկաուտական աշխատանք տանելու, բացառութիւններ կարելի է ընել Ս. Ծնունդի եւ Ս. Ջատիկի առիթներով:
307. 597- Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը պարտաւոր է իր հաշիւները պահել կանոնաւոր եւ օրինաւոր հաշուապահական տոմարներով: Իր գործունէութեան աւարտին նիւթա-բարոյական տեղեկագիր կը ներկայացնէ Մասնաճիւղի Վարչութեան:
307. 598- Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը միշտ պատրաստ կ'ունենայ սկաուտական գոյքերու ցանկը:
307. 599- Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը Մասնաճիւղի Վարչութենէն կը ստանայ ընթացիկ ծախսերու համար որոշ գումար մը, որ նուազելու պարագային կը նորոգուի համապատասխան ներկայացուած հաշուեցոյցերու, իսկ ձեռնարկներէ ստացուած հասոյթը կը փոխանցէ Մասնաճիւղի Վարչութեան, նոյնութեամբ:
307. 600- Մասնաճիւղի Վարչութենէն Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդ նիւթական փոխանցումները կը կատարուին Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի ներկայացուցած նախահաշիւներու հիման վրայ, իւրաքանչիւր աշխատանքի համար առանձին:
307. 601- Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը կը հետեւի Մասնաճիւղի խումբերու վարիչ մարմիններու անդամներու մասնակցութեան եւ յառաջդիմութեան վիճակին:
307. 602- Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը նախքան իր շրջանին աւարտը, պարտի մշակել յաջորդ տարեշրջանի Մասնաճիւղի սկաուտական աշխատանքներու Նիւթա-բարոյական յայտագիրը եւ իբրեւ առաջարկ ներկայացնել Մասնաճիւղի Վարչութեան:

## դ) ՄԱՍՆԱԾԻԴԻ ՍՏԱՌԻՏԱԿԱՆ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ

### ԿԱԶՄ

307. 603- Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմինը կրնայ փոխարինել Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը, երբ Մասնաճիւղի Վարչութիւնը կարիքը զգայ:



307. 604- Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական Վարիչ Մարմինը կը նշանակուի մասնաճիւղի վարչութեան կողմէ եւ կը գործէ մասնաճիւղի վարչութեան գործունէութեան ժամանակի տեւողութեան:

307. 605- Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմինը կը բաղկանայ հետեւեալ անդամներէն.

- ա. մասնաճիւղի խմբապետ/խմբապետուհի:
- բ. Մասնաճիւղի փոխ-խմբապետ/խմբապետուհիներ:
- գ. Կրտսեր (գայլիկ եւ արծուիկ) միաւորի: խմբապետ/խմբապետուհիներ:
- դ. Արիներու միաւորի խմբապետներ:
- ե. Արենոյշներու միաւորի խմբապետուհիներ:
- զ. Երէցական (Երէց եւ պարմանուհի) միաւորի խմբապետ/խմբապետուհիներ:
- է. Կազմակերպչականի միաւորի խմբապետ/խմբապետուհիներ:
- ը. Դաստիարակչականի միաւորի խմբապետ/խմբապետուհիներ:
- թ. հաշուապահականի եւ զանձապահութեան միաւորի խմբապետ/խմբապետուհիներ:
- ժ. Քարտուղարութեան եւ գրասենեակի միաւորի խմբապետ/խմբապետուհիներ:

307. 606- Մասնաճիւղի Վարչութիւնը իր կողմէ նշանակուած սկաուտական Վարիչ Մարմնի անուանացանկը կը փոխանցէ Շրջանային Վարչութեան առ ի վաւերացում:

307. 607- Մասնաճիւղի խմբապետը կը վարէ Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմնի ժողովը:

#### ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

307. 608- Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմինը առաջնորդուելով Մասնաճիւղի Վարչութեան տուած ուղղութիւններով ու հիմնուելով Շրջանի սկաուտական երկամեայ ծրագրին եւ ներքին Ծրագիր-Կանոնագրին վրայ, կը պատրաստէ իր տարեկան գործունէութեան ծրագիրը, զոր կը ներկայացնէ Մասնաճիւղի Վարչութեան առ ի վաւերացում, որուն օրինակը Մասնաճիւղի Վարչութիւնը կը դրկէ Շրջանային Վարչութեան առ ի տեղեկութիւն:

307. 609- Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմինը կը վարէ Մասնաճիւղի սկաուտական ընդհանուր աշխատանքները, նաեւ կը հսկէ Մասնաճիւղի սկաուտական խումբերու գործունէութեան վրայ, համաձայն Շրջանի սկաուտական ներքին կանոնագրի տրամադրութեանց եւ մասնաճիւղի ընդհանուր ժողովի որոշումներուն:

307. 610- Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմինը կը գումարէ հերթական ժողովներ: Նիստերու ատենագրութիւնները կը դրկէ Մասնաճիւղի Վարչութեան:
307. 611- Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմինը կը հսկէ Մասնաճիւղի սկաուտական դաստիարակչական եւ կազմակերպչական միաւորներու աշխատանքներուն վրայ, համաձայն Շրջանի սկաուտական ներքին դաստիարակչականի եւ կազմակերպչականի միաւորներու կանոններու տրամադրութեանց:
307. 612- Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմինը կը գործէ Մասնաճիւղի սկաուտ խմբապետներու հետ, կազմակերպելու՝ բանակումներ եւ դպրոց-բանակումներ, դաստիարակելու համար Մասնաճիւղի սկաուտ անհատներն ու աստիճանաւորները, նաեւ պատրաստելու՝ նորագրի, Նորընծայի, Բ. եւ Ա. կարգերու սկաուտներ:
- Սկաուտական Վարիչ Մարմինը կը գործակցի Մասնաճիւղի վարչութեան եւ Մասնաճիւղի սկաուտ խմբապետներու հետ, կազմակերպելու համար ընդհանուր հաւաքոյթներ, արշաւներ, ծնողական հանդիպումներ եւ կ'օժանդակէ Մասնաճիւղի սկաուտական շարժումի վերելքին:
307. 613- Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմինը իր կատարած ձեռնարկներու մասին (հանդէս, բանակում, եւ այլն) պարտի գրաւոր Նիւթաբարոյական տեղեկագիր ներկայացնել Մասնաճիւղի Վարչութեան, եւ բարոյական տեղեկագրէն օրինակ մը Շրջանային Վարչութեան:
307. 614- Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմինը ոչ Զ.Ս.Ը.Ս.ական սկաուտական խումբերու եւ պաշտօնական Մարմիններու հետ շփում հաստատելէ առաջ արտօնութիւն կը ստանայ մասնաճիւղի Վարչութենէն որ իր կարգին տեղեակ կը պահէ շրջանային Վարչութիւնը:
- Ծանօթ Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմինը, այլ Մասնաճիւղի մը Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմինին հետ իր կապը կը պահէ տեղական Մասնաճիւղի Վարչութեան խողովակով եւ Շրջանային Վարչութեան միջոցաւ:
307. 615- Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմինը կը վաւերացնէ ու կը համադրէ Մասնաճիւղի սկաուտական ենթաբաժանումներու ծրագիրներն ու աշխատանքները եւ կը հետեւի անոնց գործադրութեան:
307. 616- Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմինը, իր արխիւներուն մէջ կը պահէ սկաուտներու անհատական եւ սկաուտական տեղեկութիւնները:

- Ծանօթ- Սկաուտական տեղեկությունները կը ընդգրկեն՝
- Անուն
  - Մականուն
  - Հասցե
  - Անդամակցութեան թուական
  - Մասնաճիւղ
  - Սկաուտական կարգ
  - Աստիճան
  - Պաշտօն

#### ԻՐԱԿԱՍՈՒԹԻՒՆ

307. 617- Մասնաճիւղի սկաուտական բոլոր աշխատանքները կը ղեկավարուին Մասնաճիւղի խմբապետին կողմէ:
307. 618- Բ. եւ Ա. կարգի քննութիւնները կը կատարուին Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմնին կողմէ:
307. 619- Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմինը Շրջանային Սկաուտական Խորհուրդին հետ իր թղթակցութիւնները կը կատարէ Մասնաճիւղի Վարչութեան միջոցաւ եւ Շրջանային Վարչութեան խողովակով:

#### ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ

307. 620- Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմնի ղեկավարութեամբ Մասնաճիւղ մը պարտաւոր է ամէն շաբաթ սկաուտական աշխատանք ունենալ, բացառութիւններ կարելի է ընել Ս. Ծնունդի եւ Ս. Ծատիկի առիթներով:
307. 621- Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմինը պարտաւոր է իր հաշիւները պահել կանոնաւոր եւ օրինաւոր հաշուապահական տոմարներով:
- իր գործունէութեան աւարտին Նիւթա-բարոյական տեղեկագիր կը ներկայացնէ Մասնաճիւղի Վարչութեան:
307. 622- Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմինը միշտ պատրաստ կ'ունենայ սկաուտական գոյքերու ցանկը:
307. 623- Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմինը Մասնաճիւղի Վարչութենէն կը ստանայ ընթացիկ ծախսերու համար որոշ գումար մը, որ նուազելու պարագային կը նորոգուի համապատասխան ներկայացուած հաշուեցոյցերու, իսկ ձեռնարկներէ ստացուած հասոյթը նոյնութեամբ կը փոխանցէ Մասնաճիւղի Վարչութեան:

307. 624- Մասնաճիւղի Վարչութենէն Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմին Նիւթական փոխանցումները կը կատարուին Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմնի ներկայացուցած նախահաշիւներու հիման վրայ, իւրաքանչիւր աշխատանքի համար առանձին:
307. 625- Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմինը կը հետեւի Մասնաճիւղի խումբերու վարիչ մարմիններու անդամներու մասնակցութեան եւ յառաջդիմութեան վիճակին:
307. 626- Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմինը նախքան իր շրջանին աւարտը, պարտի մշակել յաջորդ տարեշրջանի Մասնաճիւղի սկաուտական աշխատանքներու Նիւթա-բարոյական յայտագիրը եւ իբրեւ առաջարկ ներկայացնել մասնաճիւղի Վարչութեան:

#### Ե) ՄԻԱԻՈՐԻ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

##### ԿԱԶՄ

307. 627- Միաւորի խմբապետական Մարմինը կը բաղկանայ այդ միաւորի
- ա- Միաւորի խմբապետ/խմբապետուհիէն
  - բ- Միաւորի փոխ-խմբապետ/խմբապետուհիներէն
  - գ- Խումբերու խմբապետ/խմբապետուհիներէն
  - դ- Քարտուղարէն (խմբապետ/խմբապետուհի):
307. 628- Միաւորի խմբապետ/խմբապետուհին կը վարէ միաւորի խմբապետական Մարմնի ժողովը:

##### ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

307. 629- Միաւորի խմբապետական Մարմինը առաջնորդուելով Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կամ Սկաուտական Վարիչ Մարմնի տուած ուղղութիւններով ու հիմնուելով Մասնաճիւղի Սկաուտական տարեկան ծրագրին եւ մասնաճիւղի ներքին կանոնագրին վրայ, կը պատրաստէ իր տարեկան գործունէութեան ծրագիրը, զոր կը ներկայացնէ Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին առ ի քննարկում եւ վաւերացում:
307. 630- Միաւորի խմբապետական Մարմինը կը վարէ միաւորի ընդհանուր աշխատանքները, նաեւ կը հսկէ միաւորի մնացեալ աշխատանքներուն վրայ, համաձայն Մասնաճիւղի սկաուտական ներքին կանոնագրի տրամադրութեանց եւ Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կամ Սկաուտական Վարիչ Մարմնի ուղղութիւններուն:
307. 631- Միաւորի խմբապետական Մարմինը կը գումարէ շաբաթական ժողովներ: Նիստերու ատենագրութիւնները կը դրկէ Մասնաճիւղի

Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին առ ի տեղեկութիւն:

- 307. 632- Միաւորի Խմբապետական Մարմինը կը համագործակցի Մասնաճիւղի սկաուտական դաստիարակչական եւ կազմակերպչական միաւորներուն հետ, բարելաւելու համար միաւորի խումբերու աշխատանքները:
- 307. 633- Միաւորի Խմբապետական Մարմինը իր կատարած ձեռնարկներու մասին (հանդէս, բանակում եւ այլն) պարտի գրաւոր Նիւթաբարոյական տեղեկագիր ներկայացնել Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին:
- 307. 634- Միաւորի Խմբապետական Մարմինը, այլ Մասնաճիւղի մը միաւորին հետ իր կապերը կը պահէ Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին խողովակով եւ Մասնաճիւղի Վարչութեան միջոցաւ:
- 307. 635- Միաւորի Խմբապետական Մարմինը կը վաւերացնէ ու կը համադրէ միաւորի խումբերուն ծրագիրներն ու աշխատանքները եւ կը հետեւի անոնց գործադրութեան:

#### ԻՐԱԿԱՍՈՒԹԻՒՆ

- 307. 636- Միաւորի ընդհանուր աշխատանքները կը ղեկավարուին միաւորի պատասխանատուին կողմէ:
- 307. 637- Բոլոր դաստիարակչական դասընթացքները կը գործադրուին միաւորի Խմբապետական Մարմնին կողմէ, հինուելով շրջանի դաստիարակչական կանոններուն վրայ մասնաճիւղի կազմակերպչական միաւորներու օգնութեամբ եւ Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կամ Սկաուտական Վարիչ Մարմնի հսկողութեամբ:
- 307. 638- Միաւորի Խմբապետական Մարմինը կը գումարէ տարեկան ծնողական հանդիպումներ:

#### ՊԱՐՏԱԻՐՈՒԹԻՒՆ

- 307. 639- Միաւորի Խմբապետական Մարմինը կը ներկայացնէ Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին իր միաւորի ամէն մէկ ընդհանուր ծրագրի մանրամասնութիւնները առնուազն երկու շաբաթ նախքան ծրագրի գործադրման թուականը, առ ի վաւերացում: Ծրագրի ակարտին, առաւելագոյնը մինչեւ երկու շաբաթ, պարտի ներկայացնել Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին

կամ սկաուտական Վարիչ Մարմնին ծրագրի Նիւթաբարոյական տեղեկագիրը:

ՅՕԴ. 640- Միաւորի խմբապետական Մարմինը իր ժողովի ընթացքին կը քննարկէ կատարուած աշխատանքները, նաեւ կը պատրաստէ յառաջիկայ աշխատանքներու մանրամասնութիւնները, համաձայն միաւորի տարեկան վաւերացուած ծրագրին:

ՅՕԴ. 641- Միաւորի խմբապետական Մարմինը կը քննէ իր խումբերու աստիճանաւորներու մասնակցութեան եւ յառաջդիմութեան վիճակը:

զ) ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԻԱԲՈՐԻ ՄԱՐՄԻՆ

է) ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԻԱԲՈՐԻ ՄԱՐՄԻՆ

ՅՕԴ. 642- Կազմակերպչական եւ դաստիարակչական միաւորի Մարմինները կը ղեկավարուին միաւորի խմբապետ/խմբապետուհիներով, որոնք մաս կը կազմեն Մասնաճիւղի սկաուտական Խորհուրդին կամ սկաուտական Վարիչ Մարմնին: Յիշեալ Մարմիններու կազմերու տեղեկութիւնները, պարտականութիւնները, իրաւասութիւնները, պարտաւորութիւնները եւ ներքին բաժանումները ճշդուած են շրջանի սկաուտական կազմակերպչական եւ դաստիարակչական աշխատանքներու կանոններով:

ը) ԽՈՒՄԲԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ

Ծանօթ՝ սկաուտական խումբի Վարիչ Մարմինը կ'ընդգրկէ.

Գայլիկներու Վոհմակ  
Արժուիկներու Երամ  
Փոքրարիներու Վոհմակ  
Փոքրարենոյշներու Երամ  
Արիներու Խումբ  
Արենոյշներու Խումբ  
Երէջներու փաղանգ  
Պարմանուհիներու փաղանգ

ԿԱԶՄ

ՅՕԴ. 643- Խումբի Վարիչ Մարմինը կը բաղկանայ այդ խումբի՝

ա- Խումբի խմբապետ/խմբապետուհիէն  
բ- Խումբի փոխ-խմբապետ/խմբապետուհիներէն  
գ- Խումբի վարիչ առաջնորդ/առաջնորդուհիներէն  
դ- Քարտուղարէն ( վարիչ առաջնորդ/առաջնորդուհի կամ աւելի բարձր աստիճանաւոր)

307. 644- Խումբի խմբապետը կը վարէ խումբի Վարիչ Մարմնի ժողովը:

#### ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

307. 645- Խումբի Վարիչ Մարմինը առաջնորդուելով Մասնաճիւղի ընհանուր, սկաուտական եւ պատկան միաւորի տարեկան ծրագիրով, կը պատրաստէ խումբի վեց ամսեայ գործունէութեան ծրագիրը, զոր կը ներկայացնէ միաւորի Խմբապետական Մարմնին առ ի քննարկում եւ վաւերացում:

307. 646- Խումբի Վարիչ Մարմինը կը վարէ խումբի ընդհանուր աշխատանքները, նաեւ կը հսկէ խմբակներու աշխատանքներուն վրայ:

307. 647- Խումբի Վարիչ Մարմինը կը գումարէ շաբաթական ժողովներ, նիստերու ատենագրութիւնները կը դրկէ միաւորի Խմբապետական Մարմնին առ ի տեղեկութիւն:

307. 648- Խումբի Վարիչ Մարմինը իր կատարած ձեռնարկներուն մասին (հանդէս, բանակում եւ այլն) պարտի գրաւոր Նիւթաբարոյական տեղեկագիր ներկայացնել միաւորի Խմբապետական Մարմնին:

307. 649- Խումբի Վարիչ Մարմինը կը վաւերացնէ ու կը համադրէ խումբի խմբակներու ծրագիրներն ու աշխատանքները եւ կը հետեւի անոնց գործադրութեան:

#### ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ

307. 650- Խումբի բոլոր ընդհանուր աշխատանքները կը ղեկավարուին խումբի խմբապետին կողմէ:

307. 651- Խումբի Վարիչ Մարմինը կը գումարէ տարեկան ծնողական հանդիպումներ:

#### ՊԱՐՏԱԻՐՐՈՒԹԻՒՆ

307. 652- Խումբի Վարիչ Մարմինը կը հետեւի իր խումբի անհատներու մասնակցութեան եւ յառաջդիմութեան վիճակին:

307. 653- Խումբի Վարիչ Մարմինը կը ներկայացնէ, Սիաւորի Խմբապետական Մարմնին, իր խումբի ամէն մէկ ընդհանուր ծրագրին մանրամասնութիւնները առնուազն երկու շաբաթ նախքան ծրագրի գործադրութեան թուականը, առ ի վաւերացում: Ծրագրի աւարտին,

առաւելագոյնը մինչեւ երկու շաբաթ, պարտի ներկայացնել Միաւորի  
խմբապետական Սարմին ծրագրի նիւթաբարոյական տեղեկագիրը:

307. 654- Խումբի Վարիչ Սարմինը իր ժողովի ընթացքին կը քննարկէ  
կատարուած աշխատանքները, նաեւ կը պատրաստէ յառաջիկայ  
աշխատանքներու մանրամասնութիւնները, համաձայն խումբի վեց  
ամսուայ վաւերացուած ծրագրին:

## 11. ԺՈՂՈՎՆԵՐ

### ա) ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

307. 655- Համա-Հ.Մ.Ը.Մ.-ական խմբապետական համագումարը կը կայանայ  
(157) նուազագոյնը չորս տարին անգամ մը, զայն կը կազմակերպէ եւ կը  
հովանաւորէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը:

### ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

307. 656- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Համագումարին կը  
(158) մասնակցին Շրջանային Ընդհանուր  
խմբապետները/խմբապետուհիները եւ Շրջանային խմբապետներն ու  
խմբապետուհիները, որոնց չգոյութեան պարագային՝ Շրջանի  
բարձրագոյն պաշտօն ունեցող խմբապետը եւ խմբապետուհին: Մեկուսի  
շրջաններու պարագային՝ կը մասնակցին աղջկանց եւ տղոց  
բարձրագոյն պաշտօն ունեցող ներկայացուցիչները:

Ծանօթ.- Ի պահանջեալ հարկին Կեդրոնական Վարչութիւնը կը հրաւիրէ  
անցեալի վաստակաւոր խմբապետ/խմբապետուհիներ:

### ՕՐԱԿԱՐԳ

307. 657- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Համագումարը.-  
(159)
- ա) կը լսէ իւրաքանչիւր Շրջանի սկաուտական գործունէութեան մասին  
ամփոփ տեղեկագիր՝ առ ի տեղեկութիւն:
  - բ) Կ'ուսումնասիրէ տեղեկագրերու լոյսին տակ՝ Շրջաններու եւ Մեկուսի  
Շրջաններու սկաուտական մասնագիտական հարցերը եւ կը թելադրէ  
գործունէութեան ուղեգիծ:
  - գ) կը զբաղի սկաուտական մասնագիտական հարցերով, ազգային  
դաստիարակչական գիտելիքներով, գործնական աշխատանքներով,  
Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու ծրագրումով, եւայլն:
  - դ) Կը մշակէ սկաուտական ընդհանուր գործունէութեան ուղեգիծ:
  - ե) Կրնայ, Սկաուտական Ընդհանուր Կանոնագրին կապակցութեամբ,  
բարեփոխութեան առաջարկներ բանաձեւել:



զ) Իր եզրակացութիւնները, առաջարկներն ու թելադրանքները կը փոխանցէ Կեդրոնական Վարչութեան:

307. 658- Յանա-Յ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Յանագումարը չի կրնար  
(160) զբաղիլ Միութեան վարչական, կազմակերպական եւ կանոնագրային հարցերով:

## **բ) ՄԱՍՆԱԾԻՂԵՐՈՒ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

### **ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ**

307. 659- Մասնաճիւղերու խմբապետներու Ընդհանուր ժողովը կը  
(161) բաղկանայ Շրջանային Ընդհանուր խմբապետէն կամ խմբապետուհիէն, Շրջանային խմբապետէն ու խմբապետուհիէն եւ մասնաճիւղերու խմբապետներէն կամ խմբապետուհիներէն:

ա) Հարկ եղած պարագային կը հրաւիրուին շրջանի գործօն խմբապետներ եւ խմբապետուհիներ:

բ) Շրջանային Սկաուտական Խորհուրդի անդամները կրնան մասնակցիլ այս ժողովին:

գ) Ժողովը կը պահէ ատենագրութիւն եւ զայն կը փոխանցէ Շրջանային Սկաուտական Խորհուրդին:

### **ՕՐԱԿԱՐԳ**

307. 660- Մասնաճիւղերու խմբապետներու Ընդհանուր ժողովը.-  
(162)

ա) կը լսէ մասնաճիւղերու գրաւոր ամփոփ զեկոյցները՝ սկաուտական գործունէութեան մասին:

բ) Կը քննէ սկաուտական մասնագիտական հարցեր եւ կը գտնէ համապատասխան լուծումներ՝ ջանալով բարելաւել մասնաճիւղերու գործունէութեան կարելիութիւնները:

307. 661- Մասնաճիւղերու խմբապետներու Ընդհանուր ժողովը նաեւ

ա) կը տեղեկացնէ Շրջանային Սկաուտական Խորհուրդին ապագայ ձեռնարկներու մասին:

բ) կը ստեղծէ կարելիութիւններ Մասնաճիւղերու միջեւ աւելի լայն գործակցութեան համար, կազմակերպելով ընդհանուր բնոյթ կրող ձեռնարկներ եւ աշխատանքներ:

զ) ՄԱՍՆԱԾԻՂԻ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 662- Մասնաճիւղի խմբապետական Ընդհանուր ժողովին կը մասնակցին Մասնաճիւղի սկաուտական բաժանմունքի բոլոր գործօն խմբապետ/խմբապետուհիները:

- ա) ժողովը կը վարէ Մասնաճիւղի խմբապետ/խմբապետուհին:
- բ) ժողովին կրնան մասնակցիլ նաեւ միաւորի փոխ-խմբապետ/խմբապետուհիները, միաւորի խմբապետ/խմբապետուհիները, Մասնաճիւղի փոխ խմբապետ/խմբապետուհիները եւ այլ հրաւիրեալ խմբապետ/խմբապետուհիներ:
- գ) ժողովին նպատակը կ'որոշուի ամսուայ ծրագիրներու համեմատ եւ տեղի կ'ունենայ հերթականութեամբ:
- դ) ժողովը կը պահէ ատենագրութիւն եւ կը փոխանցէ Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական վարիչ Մարմնին:

ՕՐԱԿԱՐԳ

ՅՕԴ. 663- Մասնաճիւղի խմբապետական Ընդհանուր ժողովը կ'ունենայ հետեւեալ օրակարգը:

- ա) Մասնաճիւղի ընդհանուր աշխատանքներու զեկուցում եւ քննարկում:
- բ) Մասնաճիւղի ընդհանուր մտահոգութիւններու, դժուարութիւններու եւ խնդիրներու փոխանցում:
- գ) Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կամ Սկաուտական Վարիչ Մարմնի, ինչպէս նաեւ՝ Մասնաճիւղի Վարչութեան որոշումներու եւ ուղղութիւններու փոխանցում:
- դ) Ընթացքիկ հարցեր:

դ) ՄԱՍՆԱԾԻՂԻ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐՈՒ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 664- Մասնաճիւղի սկաուտական խումբերու Վարիչ Մարմիններու ժողովին կը մասնակցին Մասնաճիւղի բոլոր վարիչ առաջնորդ/առաջնորդուհիները եւ ակտիւ բարձր պաշտօն ունեցող աստիճանաւորները:

- ա) ժողովը կը վարէ Մասնաճիւղի խմբապետ/խմբապետուհին:
- բ) ժողովը կը պահէ ատենագրութիւն եւ կը փոխանցէ Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին:
- գ) ժողովը տեղի կ'ունենայ չորս ամիսը անգամ մը:

**ՕՐԱԿԱՐԳ**

**ՅՕԴ. 665-** Մասնաճիւղի սկաուտական խումբերու Վարիչ Մարմիններու ժողովը կ'ունենայ հետեւեալ օրակարգը:

- ա) Ընդհանուր զեկոյց Մասնաճիւղի չորս ամսուայ աշխատանքներուն մասին:
- բ) Ձեկուցում Մասնաճիւղի խումբերու անհատներու ներկայութեան մասին:
- գ) Ձեկուցում Մասնաճիւղի ընդհանուր մտահոգութիւններու եւ դժուարութիւններու մասին:
- դ) Սկաուտական աշխատանքներու քննարկում:
- ե) Սկաուտական աշխատանքներու բարելաւման առաջարկներ:
- զ) Ձեկուցում խումբերու գործունէութեան մասին:

ե) ՄԱՍՆԱԾԻԴԻ ԱՍՏԻՃԱՆԱԴՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

**ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ**

**ՅՕԴ. 666-** Մասնաճիւղի աստիճանաւորական ժողովին կը մասնակցին Մասնաճիւղի բոլոր աստիճանաւորները:

- ա) ժողովը կը վարէ Մասնաճիւղի խմբապետ/խմբապետուհին:
- բ) ժողովը կը պահէ ատենագրութիւն եւ կը փոխանցէ Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին:
- գ) ժողովը տեղի կ'ունենայ առնուազն վեց ամիսը անգամ մը:

**ՕՐԱԿԱՐԳ**

**ՅՕԴ. 667-** Մասնաճիւղի աստիճանաւորական ժողովը կ'ունենայ հետեւեալ օրակարգը:

- ա) Ձեկուցել եւ փոխանցել Մասնաճիւղի աստիճանաւորական ընդհանուր ծրագրի տեղեկութիւնները:
- բ) Փոխանցել Մասնաճիւղի ընդհանուր մտահոգութիւնները:

զ) ՄԱՍՆԱԾԻՂԻ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 668- Մասնաճիւղի սկաուտական ընդհանուր ժողովին կը մասնակցին մասնաճիւղի բոլոր սկաուտները:

- ա) ժողովը կը վարէ Մասնաճիւղի խմբապետ/խմբապետուհին:
- բ) ժողովը կը պահէ ատենագրութիւն եւ կը փոխանցէ Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին:
- գ) ժողովը տեղի կ'ունենայ տարին անգամ մը:

ՕՐԱԿԱՐԳ

ՅՕԴ. 669- Մասնաճիւղի սկաուտական ընդհանուր ժողովը կ'ունենայ հետեւեալ օրակարգը:

- ա) Զեկուցել եւ փոխանցել Մասնաճիւղի ծրագիրներու տեղեկութիւնները եւ ընդհանուր մտահոգութիւնները:
- բ) Ամփոփ կերպով զեկուցում տալ միաւորներու անցեալի աշխատանքներուն մասին:

է) ՄԻԱԴՈՐԻ ԽՈՒՄԲԵՐՈՒ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 670- Միաւորի խումբերու Վարիչ Մարմիններու ժողովին կը մասնակցին բոլոր միաւորի վարիչ առաջնորդ/առաջնորդուհիները եւ աւելի բարձր պաշտօն եւ կամ աստիճան ունեցող աստիճանաւորները:

- ա) ժողովը կը վարէ միաւորի խմբապետ/խմբապետուհին:
- բ) ժողովը կը պահէ ատենագրութիւն եւ կը փոխանցէ միաւորի խմբապետական Մարմնին:
- գ) ժողովը տեղի կ'ունենայ երկու ամիսը անգամ մը:

ՕՐԱԿԱՐԳ

ՅՕԴ. 671- Միաւորի խումբերու Վարիչ Մարմիններու ժողովը կ'ունենայ հետեւեալ օրակարգը:

- ա) Երկու ամսուայ աշխատանքներու զեկուցում:
- բ) Զեկուցում միաւորի խումբերու անհատներու մասնակցութեան եւ յառաջդիմութեան վիճակի մասին:
- գ) Զեկուցում միաւորի ընդհանուր մտահոգութիւններու եւ դժուարութիւններու մասին:
- դ) Սկաուտական աշխատանքներու քննարկում:

- ե) սկաուտական աշխատանքներու բարելաւման առաջարկներ:
- զ) Ձեկուցում խումբերու գործունէութեան մասին:
- է) Ընթացիկ հարցեր:

ը) ՄԻԱԻՈՐԻ ԱՍՏԻՃԱՆԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 672- Միաւորի աստիճանաւորական ժողովին կը մասնակցին միաւորի բոլոր աստիճանաւորները:

- ա) ժողովը կը վարէ միաւորի խմբապետ/խմբապետուհին:
- բ) ժողովը կը պահէ ատենագրութիւն եւ կը փոխանցէ միաւորի խմբապետական Մարմնին:
- գ) ժողովը տեղի կ'ունենայ վեց ամիսը անգամ մը:

ՕՐԱԿԱՐԳ

ՅՕԴ. 673- Միաւորի աստիճանաւորական ժողովը կ'ունենայ հետեւեալ օրակարգը:

- ա) Ձեկուցել եւ փոխանցել Մասնաճիւղի աստիճանաւորական ընդհանուր ծրագիրներու տեղեկութիւնները:
- բ) Ձեկուցել եւ փոխանցել միաւորի ծրագիրներու տեղեկութիւնները եւ ընդհանուր մտահոգութիւնները:
- գ) Քննարկում աստիճանաւորներու մասնակցութեան եւ յառաջդիմութեան մասին:
- դ) Ընթացիկ հարցեր:

թ) ՄԻԱԻՈՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 674- Միաւորի ընդհանուր ժողովին կը մասնակցին միաւորի բոլոր սկաուտները:

- ա) ժողովը կը վարէ միաւորի խմբապետ/խմբապետուհին:
- բ) ժողովը կը պահէ ատենագրութիւն եւ կը փոխանցէ միաւորի խմբապետական Մարմնին:
- գ) ժողովը տեղի կ'ունենայ տարին անգամ մը:

ՕՐԱԿԱՐԳ

ՅՕԴ. 675- Միաւորի Ընդհանուր ժողովը կ'ունենայ հետեւեալ օրակարգը:

- ա) Ձեկուցել եւ փոխանցել միաւորի ծրագիրներու տեղեկութիւնները եւ ընդհանուր մտահոգութիւնները:

- բ) Ամփոփ կերպով զեկուցել միաւորի խումբերու անցնող տարեշրջանի աշխատանքներուն մասին:
- գ) Ընթացիկ հարցեր:

ժ) ԽՈՒՄԲԻ ԱՍՏԻՃԱՆԱԴՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 676- Խումբի աստիճանաւորական ժողովին կը մասնակցին խումբի բոլոր աստիճանաւորները եւ աստիճանաւորի թեկնածուները:

- ա) Ժողովը կը վարէ խումբի խմբապետ/խմբապետուհին:
- բ) Ժողովը տեղւոյն վրայ կ'արձանագրէ եւ կը վաւերացնէ իր ատենագրութիւնը եւ կը փոխանցէ խումբի Վարիչ Մարմնին:
- գ) Ժողովը տեղի կ'ունենայ շաբաթը անգամ մը, աշխատանքի ընթացքին:

ՕՐԱԿԱՐԳ

ՅՕԴ. 677- Խումբի աստիճանաւորական ժողովը կ'ունենայ հետեւեալ օրակարգը:

- ա) Նախորդ նիստի ատենագրութեան ընթերցում:
- բ) Ներկայութեան ստուգում:
- գ) Մասնաճիւղի եւ միաւորի ընդհանուր յայտարարութիւններ
- դ) Խումբի վարիչ Մարմնի յայտարարութիւններ եւ որոշումներու փոխանցում:
- ե) Խմբակներու զեկուցում եւ խմբակի աշխատանքներու քննարկում:
- զ) Խումբի նախորդող շաբթուայ աշխատանքներու քննարկում:
- է) Յառաջիկայ շաբթուայ աշխատանքի ծրագրի վերանայում:
- ը) Խմբային աշխատանքներու գործադրման միջոցներու մասին կարծիքներու փոխանակում:
- թ) Խումբի անհատներու մասնակցութեան եւ յառաջդիմութեան քննարկում:
- ժ) Զանազան հարցեր եւ առաջարկներ:

ժա) ԽՈՒՄՔԻ ԺՈՂՈՎ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 678- Խոււմբի ժողովին կը մասնակցին խոււմբի բոլոր սկաուտները:

- ա) ժողովը կը վարէ խոււմբի խմբապետ/խմբապետուհին:
- բ) ժողովը տեղւոյն վրայ կ'արձանագրէ եւ կը վաւերացնէ իր ատենագրութիւնը եւ կը փոխանցէ խոււմբի Վարիչ Մարմնին:
- գ) ժողովը տեղի կ'ունենայ շաբաթը անգամ մը աշխատանքի ընթացքին:

ՕՐԱԿԱՐԳ

ՅՕԴ. 679- Խոււմբի ժողովը կ'ունենայ հետեւեալ օրակարգը:

- ա) Նախկին ժողովի ատենագրութեան ընթերցում:
- բ) Ներկայութեան ստուգում:
- գ) Մասնաճիւղի եւ միաւորի ընդհանուր յայտարարութիւններ:
- դ) Խոււմբի յայտարարութիւններ:
- ե) Գնահատականներ եւ դիտողութիւններ:
- զ) Խոււմբի անցեալի եւ ապագայի աշխատանքներու քննարկում:

ժբ) ԽՄԲԱԿԻ ԱՌԱՋՆՈՐԴ/ԱՌԱՋՆՈՒՐԴՈՒՅԻԻ ԵՒ ՓՈԽ ԱՌԱՋՆՈՐԴ/ԱՌԱՋՆՈՐԴՈՒՅԻԻ ԺՈՂՈՎ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 680- Խմբակի առաջնորդ/առաջնորդուհիի եւ փոխ-առաջնորդ/առաջնորդուհիի ժողովին կը մասնակցին խմբակի առաջնորդ/առաջնորդուհին, փոխ-առաջնորդ/առաջնորդուհին եւ խոււմբի վարիչ առաջնորդ/առաջնորդուհին:

- ա) ժողովը կը վարէ խմբակի պատասխանատուն:
- բ) ժողովը տեղի կ'ունենայ ամիսը անգամ մը:

ՕՐԱԿԱՐԳ

ՅՕԴ. 681- Խմբակի առաջնորդ/առաջնորդուհիի եւ փոխ-առաջնորդ/առաջնորդուհիի ժողովը կը քննէ ու կը ծրագրէ խմբակի աշխատանքները:

ժգ) ԽՄԲԱԿԻ ԺՈՂՈՎ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 682- Խմբակի ժողովին կը մասնակցին խմբակի բոլոր անդամ-ները:

- ա) ժողովը կը վարէ խմբակի առաջնորդ/առաջնորդուհին:
- բ) ժողովը տեղի կ'ունենայ խմբակի աշխատանքի ժամուն:

ՕՐԱԿԱՐԳ

ՅՕԴ. 683- Խմբակի ժողովը կ'ունենայ հետեւեալ օրակարգը:

- ա) Խմբակի աշխատանքներու բաժանում:
- բ) Առաջարկներու հաւաքում:

ժդ) ՕԺԱՆԴԱԿ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐՈՒ ԺՈՂՈՎ

ՅՕԴ. 684- Մասնաճիւղի սկաուտական բաժանմունքի մէջ կրնան աշխատանքներ տանիլ սկաուտական օժանդակ կազմեր:  
ՅՕԴ. 685- Սկաուտական օժանդակ կազմերը կեանքի կը կոչուին Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կամ Սկաուտական Վարիչ Մարմնի կողմէ, հետեւեալ պայմանները լրացնելէ ետք:

- ա) Օժանդակ սկաուտական կազմի համար կը ճշդուի յստակ նպատակ, աշխատանք մը յառաջացնելու համար:
- բ) Օժանդակ սկաուտական կազմի համար կը ճշդուի ժամանակաշրջան:
- գ) Օժանդակ սկաուտական կազմի համար կը ճշդուին իրաւասութեան սահմանները:

Ծանօթ- Վերոյիշեալ պայմանները կը պատրաստուին գրաւոր եւ կը փոխանցուին օժանդակ սկաուտական կազմի անդամներուն, առաջին ժողովի ընթացքին:

ՅՕԴ. 686- Օժանդակ սկաուտական կազմերու անդամները կը նշանակուին եւ իրենց պաշտօնները կը ճշդուին Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կամ Սկաուտական Վարիչ Մարմնի կողմէ:

ՅՕԴ. 687- Օժանդակ սկաուտական կազմերը իրենց աշխատանքի աւարտին կը պատրաստեն միութեամբ-բարոյական տեղեկագիր իրենց տարած աշխատանքներուն մասին եւ կը ներկայացնեն Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին:



## ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

307. 688- Օժանդակ սկաուտական կազմի մը ժողովին կը մասնակցին օժանդակ սկաուտական կազմի բոլոր անդամները:
- ա) Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը կամ Սկաուտական Վարիչ Մարմինը կը նշանակէ կազմի պատասխանատուն:
  - բ) Օժանդակ կազմի պատասխանատուն հարկ եղած պարա-զային կրնայ մասնակցիլ Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կամ Սկաուտական Վարիչ Մարմնի ժողովին, զեկուցելու համար կազմի աշխատանքներուն մասին:
  - գ) Օժանդակ կազմին կրնան մասնակցիլ սկաուտական բաժանմունքի շարքային քոյր/եղբայրները:
  - դ) Ժողովը կը պահէ ատենագրութիւն եւ կը փոխանցէ Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին:
  - ե) Օժանդակ կազմը կ'ունենայ հերթական ժողովներ:

## ՕՐԱԿԱՐԳ

307. 689- Օժանդակ սկաուտական կազմի ժողովի օրակարգը կը ճշդուի համապատասխան կազմի անդամներու կողմէ, իրենց տրուած աշխատանքի նպատակի եւ իրաւասութիւններու սահմանին մէջ:

## ԺԵ) ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎ

307. 690- Մասնաճիւղի սկաուտական բաժանմունքը, միաւորներու կամ խումբերու սկաուտական աշխատանքները ծնողներուն ծանօթացնելու եւ անոնց կարծիքը ստանալու նպատակով կը կազմակերպէ ծնողական ժողովներ, որոնք նախատեսուած կ'ըլլան տարեկան յայտագիրներու մէջ:

## ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

307. 691- Ծնողական ժողովներուն կը մասնակցին համապատասխան խմբաւորումի սկաուտներուն ծնողքները:
307. 692- Ծնողական ժողովները կը վարեն համապատասխան խմբաւորումներու խմբապետ/խմբապետուհիները:

## ՕՐԱԿԱՐԳ

307. 693- Ծնողական ժողովի օրակարգը կը ճշդուի համապատասխան խմբաւորումի Մարմնին միջոցաւ եւ նախապէս կը յայտարարուի:
307. 694- Ծնողական ժողովը աւարտելէն ետք, ժողովը կազմակերպող Մարմինը իր զեկուցումը կը ներկայացնէ իրմէ աւելի բարձր Մարմնին:

## 12. ՊԱՇՏՕՆՆԵՐ

307. 695- (163) Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտական շարքերը ունին իրենց յատուկ սկաուտական հետեւեալ պաշտօնները.-
- 1.- Շրջանային Ընդհանուր խմբապետ/ խմբապետուհի
  - 2.- Շրջանային խմբապետ եւ խմբապետուհի
  - 3.- Մասնաճիւղի խմբապետ/ խմբապետուհի
  - 4.- Միաւորի խմբապետ եւ խմբապետուհի
307. 696- (164) Վերոյիշեալ պաշտօններու (թիւ 1 եւ 2) գործունէութեանց ժամանակաշրջանը ճշդուած է սոյն կանոնագրութեամբ, իսկ (թիւ 3 եւ 4) պաշտօններու ժամանակաշրջանը հարկ է ճշդել ներքին կանոնագրութիւններու մէջ:
307. 697-
- Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանի սկաուտութիւնը ունի նաեւ հետեւեալ պաշտօնները.-
- 1.- Շրջանային փոխ-խմբապետ եւ փոխ-խմբապետուհի
  - 2.- Մասնաճիւղի Փոխ-խմբապետ/խմբապետուհի
  - 3.- Միաւորի փոխ-խմբապետ/խմբապետուհի
  - 4.- խմբապետ/խմբապետուհի, երամի պետ/վոհմակի պետ
  - 5.- Փոխ-խմբապետ/խմբապետուհի, երամի փոխպետ/վոհմակի փոխ-պետ
  - 6.- Վարիչ առաջնորդ/վարիչ-առաջնորդուհի, վարիչ վեցեակապետ/վարիչ վեցեակապետուհի
  - 7.- Տասնեակի Պատասխանատու/Պատասխանատուհի
  - 8.- Տասնեակի Փոխ Պատասխանատու/Պատասխանատուհի
  - 9.- Առաջնորդ/Առաջնորդուհի
  - 10.- Փոխ-առաջնորդ/Առաջնորդուհի
  - 11.- վեցեակապետ/վեցեակապետուհի
  - 12.- Փոխ-վեցեակապետ/վեցեակապետուհի
- Ծանօթ -Թիւ 4, 5, 6, 9, 10, 11 եւ 12ով ճշդուած պաշտօններու նշանակումը, պայմանները, պարտականութիւնները եւ իրաւասութիւնները կը բացատրուին Աստիճաններու գլխուն տակ:
307. 698- Վերոյիշեալ պաշտօնները ժամանակաւոր են: Մնայուն հանգամանք չունին:
307. 699- (165) Պաշտօն մը պէտք է վաւերացուած ըլլայ Սկաուտական եւ Վարչական համապատասխան մարմիններու կողմէ:
307. 700- Պաշտօն մը տրուի գրաւոր:

## **ա) ՇՐՋԱՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏ/ԽՄԲԱՊԵՏՈՒՅԻ**

**ՅՕԴ. 701-** Շրջանի մը սկաուտութեան ընդհանուր պետն է:  
**(166)**

- ա) Շրջանէն ներս այս պաշտօնը կը հաստատուի երբ շրջանը ունենայ նուազագոյնը 500 սկաուտ եւ երկու մասնաճիւղ:
- բ) Այն շրջանը որ չունի Շրջանային Խմբապետ եւ Խմբապետուհի, չի կրնար Շրջանային Ընդհանուր Խմբապետ/Խմբապետուհի ունենալ:
- գ) Կը նշանակուի Շրջանային Վարչութեան կողմէ: Կը գործէ Շրջանային Վարչութեան գործունէութեան ժամանակաշրջանին:
- դ) Կրնայ երկրորդ անգամ վերանշանակուիլ:
- ե) Կրնայ մէկ շրջան դադարէ ետք վերանշանակուիլ, պայմանով որ չդադրեցնէ իր միութենական գործունէութիւնը:

## **ՊԱՅՄԱՆՆԵՐ**

**ՅՕԴ. 702-** Շրջանային Ընդհանուր Խմբապետը/Խմբապետուհին պարտի նախապէս երկու տարի Շրջանային Խմբապետի/Խմբապետուհիի պաշտօն վարած ըլլալ:  
**(167)**

**ԾԱՆՕԹ.-** Նախընտրաբար ունենալ Արարատեան Կարգ եւ Wood Badge:

## **ՊԱՐՏԱԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԽԱՈՒԹԻՒՆ**

**ՅՕԴ. 703-** Շրջանային Ընդհանուր Խմբապետը/Խմբապետուհին  
**(168)**

- ա) Կը հսկէ իր շրջանի սկաուտական ընդհանուր աշխատանքներուն:
- բ) Կը մշակէ Շրջանային Խմբապետներու գործակցութեամբ՝ իր շրջանի սկաուտական շարժումին ընդհանուր ուղեգիծը:
- գ) Կը վարէ մասնաճիւղերու Խմբապետներու ընդհանուր ժողովը:
- դ) Կը վարէ սկաուտական ընդհանուր հանդիսութիւնները:
- ե) Կը մասնակցի Շրջանային Սկաուտական Խորհուրդի ժողովին՝ իրաւասու ձայնով:
- զ) Կը մասնակցի Համա-Հ.Ս.Ը.Մ.ական Խմբապետական Համագումարին՝ ի պաշտօնէ:
- է) Կը մասնակցի Շրջանային Ներկայացուցչական ժողովին՝ խորհրդակցական ձայնով:

**ՅՕԴ. 704-** Հ.Ս.Ը.Մ.ի Արեւմտեան Սիւսթեալ Նահանգներու շրջանի շրջանային ընդհանուր Խմբապետը.-

- ա) կը մշակէ՝ Շրջանային Խմբապետ/Խմբապետուհիի եւ շրջանային փոխ Խմբապետ/Խմբապետուհիներու գործակցութեամբ շրջանի սկաուտական շարժումին ընդհանուր ուղեգիծը:
- բ) Նախգան շրջանի աւարտը, կը մշակէ շրջանային Խմբապետ/Խմբապետուհիի եւ Շրջանային փոխ-

խմբապետ/խմբապետուհիներու գործակցութեամբ, սկաուտական աշխատանքներու յայտագիր մը որը կը փոխանցուի յաջորդող Շրջանային սկաուտական խորհուրդին իբրեւ ուղեցոյց:

զ) Կը վարէ Շրջանային Սկաուտական խորհուրդի ժողովը:

#### բ) ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՄԲԱՊԵՏ ԵՒ ԽՄԲԱՊԵՏՈՒՅԻ

ՅՕԴ. 705

- (169) ա) Շրջանային խմբապետը գայլիկներու, արիներու եւ երէցներու պատասխանատու խմբապետն է, իսկ Շրջանային խմբապետուհին՝ արծուիկներու, արեւոյշներու եւ պարմանուհիներու:
- բ) Կը նշանակուի Շրջանային Վարչութեան կողմէ եւ կը գործէ Շրջանային Վարչութեան գործունէութեան ժամանակաշրջանին:

#### ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՅՕԴ. 706-

- ա) Պարտի նախապէս մէկ տարի մասնաճիւղի խմբապետ/խմբապետուհիի կամ աւելի բարձր պաշտօն վարած ըլլալ:
- բ) Ունենալ նախընտրաբար Արարատեան Կարգ եւ Wood Badge (Տախտակ Նշան):

#### ՊԱՐՏԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՕԴ. 707- Շրջանային խմբապետը կամ Շրջանային խմբապետուհին.-  
(170)

- ա) Կը հսկէ մանչերու կամ աղջկանց բաժնի գործունէութիւններուն վրայ:
- բ) Կը յանձնէ բոլոր մասնաճիւղերէն ներս իր բաժնի համապատասխան խմբապետներու աստիճաններն ու պաշտօնները:
- գ) Կը վարէ իր թեւին յատուկ՝ ընդհանուր հանդիսութիւնները:
- դ) Կը մասնակցի Համա-Հ.Ս.Ը.Ս.ական խմբապետական Համագումարին՝ ի պաշտօնէ:
- ե) Կը մասնակցի Շրջանային Սկաուտական խորհուրդի ժողովին՝ իրաւասու ձայնով:
- զ) Կը մասնակցի Մասնաճիւղերու խմբապետական Ընդհանուր ժողովին՝ ի պաշտօնէ:
- է) Կը մասնակցի Շրջանային Ներկայացուցչական ժողովին՝ խորհրդակցական ձայնով:

զ) ՇՐՋԱՆԱՅԻՆ ՓՈԽ-ԽՄԲԱՊԵՏ/ԽՄԲԱՊԵՏՈՒՅԻ

307. 708

- ա) Շրջանային սկաուտական խորհուրդի մնացեալ բոլոր անդամները կը նշանակուին իբրեւ շրջանային փոխ-խմբապետ/խմբապետուհի:
- բ) Շրջանային փոխ-խմբապետ/խմբապետուհին կ'օժանդակէ շրջանային խմբապետ/խմբապետուհիին, յանձն առնելով պարտականութիւններ (կազմակերպչական, դաստիարակչական):
- գ) Կը նշանակուի Շրջանային Վարչութեան կողմէ, կը գործէ Շրջանային Վարչութեան գործունէութեան ժամանակաշրջանին:

ՊԱՅՄԱՆՆԵՐ

307. 709-

- ա) Պարտի նախապէս մէկ տարի միաւորի խմբապետ/խմբապետուհիի կամ աւելի բարձր պաշտօն վարած ըլլալ:
- բ) Ունենալ նախընտրաբար Արարատեան Կարգ եւ Wood Badge (Տախտակ Նշան):

ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ

307. 710-

- ա) Կ'աշխատի իր պարտականութեան (կազմակերպչական, դաստիարակչական) մարզին մէջ:
- բ) Կը մասնակցի Շրջանային սկաուտական խորհուրդի ժողովին՝ իրաւասու ձայնով:
- գ) Կը մասնակցի Մասնաճիւղերու խմբապետական Ընդհանուր ժողովին՝ ի պաշտօնէ:

դ) ՄԱՍՆԱԾԻՂԻ ԽՄԲԱՊԵՏ/ԽՄԲԱՊԵՏՈՒՅԻ

307. 711- (171) Մասնաճիւղի մը սկաուտական բաժնի ընդհանուր պատասխանատուն է:

307. 712- (172) Մասնաճիւղի խմբապետ/խմբապետուհին կը նշանակուի մասնաճիւղի Վարչութեան կողմէ՝ համախորհուրդ Շրջանային սկաուտական խորհուրդին:

307. 713- Մասնաճիւղի Վարչութիւնը կը նշանակէ Մասնաճիւղի խմբապետը եւ կը ներկայացնէ զայն Շրջանային Վարչութեան՝ առ ի վաւերացում:

307. 714- (173) Կը գործէ մասնաճիւղի Վարչութեան գործունէութեան ժամանակաշրջանին:

307. 715- Մասնաճիւղի խմբապետին նշանակումի պայմանները,

(174) պարտաւորութիւնները եւ իրաւասութիւնները կը ճշդուին շրջաններու կամ մեկուսի շրջաններու Սկաուտական Ներքին Կանոնագրութեամբ:

### ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՅՕԴ. 716-

- ա) Պարտի նախապէս մէկ տարի միաւորի խմբապետ/խմբապետուհիի կամ Մասնաճիւղի փոխ-խմբապետ/խմբապետուհիի պաշտօն վարած ըլլալ:
- բ) Ունենալ նախընտրաբար Արարատեան Կարգ եւ Wood Badge (Տախտակ Նշան):

### ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 717-

- ա) Կը հսկէ եւ կը ղեկավարէ իր Մասնաճիւղի սկաուտական բոլոր աշխատանքները:
- բ) Առաջնորդուելով Մասնաճիւղի Վարչութեան տուած ուղղութիւններուն ու հիմնուելով շրջանի երկամեայ ծրագրին եւ ներքին կանոնագրին վրայ կը պատրաստէ մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կամ Սկաուտական Վարիչ Մարմնի անդամներու գործակցութեամբ իր Մասնաճիւղի սկաուտական բաժանմունքի տարեկան գործունէութեան ծրագիրը: Ձոր կը ներկայացնէ Մասնաճիւղի Վարչութեան առ ի վաւերացում, որուն օրինակը Մասնաճիւղի Վարչութիւնը կը ղրկէ Շրջանային Վարչութեան առ ի տեղեկութիւն:
- գ) Կը մշակէ Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կամ Սկաուտական Վարիչ Մարմնի գործակցութեամբ, Մասնաճիւղի սկաուտական բաժանմունքի յաջորդող տարուայ ծրագիրը, որը կը ներկայացուի Մասնաճիւղի Վարչութեան իբրեւ առաջարկ սկաուտական պիւտճէն նկատի առնելու համար:
- դ) Կը վարէ Մասնաճիւղի Սկաուտական Վարիչ Մարմնի ժողովը: Նաեւ Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի ատենապետի բացակայութեան կը վարէ Խորհուրդի ժողովը:
- ե) Կը վարէ Մասնաճիւղի սկաուտական ընդհանուր հանդիսութիւնները:
- զ) Կը մասնակցի Մասնաճիւղերու խմբապետական Ընդհանուր ժողովին՝ իարաւասու ձայնով:
- է) Կը վարէ Մասնաճիւղի սկաուտական ընդհանուր ժողովները:
- ը) Կ'առաջարկէ Մասնաճիւղի Վարչութեան Մասնաճիւղի փոխ-խմբապետ/խմբապետուհիներ եւ միաւորի խմբապետ/խմբապետուհիներ:

**ե) ՄԱՍՆԱԾԻՂԻ ՓՈԽ-ԽՄԲԱՊԵՏ/ԽՄԲԱՊԵՏՈՒՅԻ**

307. 718- Մասնաճիւղի փոխ-խմբապետ/խմբապետուհիի նշանակումը կը կատարուի Մասնաճիւղի Վարչութեան կողմէ, համախորհուրդ Շրջանային Սկաուտական Խորհուրդին Շրջանային Վարչութեան վաւերացումով:
307. 719- Կը գործէ Մասնաճիւղի Վարչութեան գործունէութեան ժամանակաշրջանին:

**ՊԱՅՄԱՆՆԵՐ**

307. 720-
- ա) Պարտի նախապէս տարի մը միաւորի խմբապետ/խմբապետուհիի պաշտօն վարած ըլլալ:
  - բ) Ունենալ նախընտրաբար Արարատեան կարգ եւ Տախտակ Նշան:

**ՊԱՐՏԱԻՈՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ**

307. 721-
- ա) Կը հսկէ դաստիարակչական եւ կազմակերպչական բաժանմունքներու աշխատանքներուն:
  - բ) Կը մասնակցի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կամ Սկաուտական Վարիչ Սարմնի ժողովին՝ իրաւասու ձայնով:
  - գ) Կը ստանձնէ Մասնաճիւղի խմբապետ/խմբապետուհիի բոլոր պարտականութիւնները Մասնաճիւղի խմբապետ/խմբապետուհիի բացակայութեան:

**զ) ՄԻԱԻՈՐԻ ԽՄԲԱՊԵՏ/ԽՄԲԱՊԵՏՈՒՅԻ**

307. 722- (175) Մասնաճիւղի սկաուտական միաւորները կ'ունենան Միաւորի խմբապետ եւ խմբապետուհի, որուն նշանակումի պայմանները, պարտականութիւնները, պարտաւորութիւնները եւ իրաւասութիւնները կը ճշդուին Շրջաններու կամ Մեկուսի Շրջաններու Սկաուտական Ներքին Կանոնագրութեամբ:
307. 723- Մասնաճիւղի միաւորի խմբապետ/խմբապետուհին կ'առաջարկուի Մասնաճիւղի խմբապետին կողմէ եւ կը նշանակուի Մասնաճիւղի Վարչութեան կողմէ, համախորհուրդ Շրջանային Սկաուտական Խորհուրդին Շրջանային Վարչութեան վաւերացումով:
307. 724- Կը գործէ Մասնաճիւղի Վարչութեան գործունէութեան ժամանակաշրջանին:

## ՊԱՅՄԱՆՆԵՐ

### ՅՕԴ. 725-

- ա) Պարտի նախապես մէկ տարի խմբապետ/խմբապետուհիի պաշտօն վարած ըլլալ:
- բ) Պարտի խմբապետ/խմբապետուհիի աստիճան ունենալ:
- գ) Ունենալ նախընտրաբար Արարատեան Կարգ եւ Տախտակ նշան:

## ՊԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՆ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ

### ՅՕԴ. 726-

- ա) Կը հսկէ իր միաւորի աշխատանքներուն:
- բ) Առաջնորդուելով Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կամ Սկաուտական Վարիչ Մարմնի տուած ուղղութիւններուն ու հիմնուելով մասնաճիւղի սկաուտական ներքին կանոնագրին վրայ կը պատրաստէ միաւորի փոխ-խմբապետ/խմբապետուհիներու եւ խմբապետ/խմբապետուհիներու գործակցութեամբ իր Միաւորի տարեկան գործունէութեան ծրագիրը: Զոր կը ներկայացնէ Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Վարիչ Մարմնին առ ի վաւերացում:
- գ) Կը մասնակցի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կամ Սկաուտական Վարիչ Մարմնի ժողովին՝ իրաւասու ձայնով:
- դ) Կը վարէ միաւորի խմբապետական ժողովը:
- ե) Կը մասնակցի իր միաւորի խմբերու ծնողական ժողովներուն խորհրդակցական ձայնով:

## Է) ՄԻԱԴՐՈՒ ՓՈԽ-ԽՄԲԱՊԵՏ/ԽՄԲԱՊԵՏՈՒԻՅԻ

### ՅՕԴ. 727-

- ա) Միաւոր մը իր միաւորի խմբապետ/խմբապետուհիէն զատ կրնայ նաեւ ունենալ միաւորի փոխ-խմբապետ/խմբապետուհիները:
- բ) Միաւորի փոխ-խմբապետ/խմբապետուհին կ'առաջարկուի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին կողմէ, կը նշանակուի մասնաճիւղի վարչութեան կողմէ համախորհուրդ Շրջանային Սկաուտական Խորհուրդին Շրջանային Վարչութեան վաւերացումով:
- գ) Կը գործէ Մասնաճիւղի Վարչութեան գործունէութեան ժամանակաշրջանին:

## ՊԱՅՄԱՆՆԵՐ

### ՅՕԴ. 728-

- ա) Պարտի նախապես մէկ տարի խմբապետի պաշտօն վարած ըլլալ:
- բ) Պարտի խմբապետի աստիճան ունենալ:



- զ) Ունենալ նախընտրաբար Արարատեան Կարգ եւ Տախտակ Նշան:

**ՊԱՐՏԱԻՐՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ**

**ՅՕԴ. 729-**

- ա) Միաւորի փոխ-խմբապետ/խմբապետուհին կ'օժանդակէ միաւորի խմբապետ/խմբապետուհին, յանձն առնելով պարտականութիւններ միաւորէն ներս (կազմակերպչականի եւ դաստիարակչականի) ուղղութեամբ:
- բ) Կը մասնակցի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կամ Սկուտական Վարիչ Մարմնի ժողովին՝ խորհրդակցական ծայնով:
- գ) Միաւորի խմբապետ/խմբապետուհիի բացակայութեան կը ստանձնէ անոր դերը:

**ը) ՏԱՍՆԵԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ/ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՅԻ**

**ՅՕԴ. 730-**

- ա.- Իւրաքանչիւր տասնեակ կ'ունենայ մէկ պատասխանատու/պատասխանատուի:
- բ.- Կ'ընտրուի իր տասնեակին կողմէ, վեց ամսուայ ժամանակաշրջանի մը համար: Ընտրութիւնը պէտք է վաւերացուի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին կողմէ:

**ՊԱՅՄԱՆՆԵՐ**

- ՅՕԴ.731- Ունենալ առնուազն տասնապետ/տասնապետուհիի աստիճան:

**ՊԱՐՏԱԻՐՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ**

**ՅՕԴ. 732-**

- ա.- Կը համադրէ եւ կը ղեկավարէ տասնեակի աշխատանքները:
- բ.- Կը ծրագրէ տասնեակի 6 ամսուայ ծրագիրը, տասնեակի փոխ պատասխանատուի/պատասխանատուիի հետ եւ կը ներկայացնէ փաղանգի Վարիչ Մարմնին առ ի վաւերացում երկու ամիս նախքան վեց ամսուայ շրջանի աւարտը:
- գ.- Կը մասնակցի փաղանգի Վարիչ Մարմնի ժողովին իրաւասու ծայնով:
- դ.- Կը մասնակցի Մասնաճիւղի եւ միաւորի աստիճանաւորական ժողովներուն:
- ե.- Կը մասնակցի Մասնաճիւղի սկաուտական խումբերու Վարիչ Մարմիններու ժողովին:
- զ.- Կը վարէ տասնեակի ժողովները:
- է.- Կը մասնակցի փաղանգի ժողովին:
- ը.- Կը մասնակցի Մասնաճիւղի Տարեկան Ընդհանուր ժողովին:

բ) ՏԱՍՆԵԱԿԻ ՓՈԽ-ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ/ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՅԻ

307. 733-

- ա) Իւրաքանչիւր տասնեակ կ'ունենայ մէկ փոխ-պատասխանատու/պատասխանատուի:
- բ) Կ'ընտրուի վեց ամսուայ ժամանակաշրջանի մը համար իր տասնեակի անդամներուն կողմէ: Ընտրութիւնը պէտք է վաւերացուի միաւորի խմբապետական մարմնի կողմէ:

ՊԱՅՄԱՆՆԵՐ

307. 734-

- ա) Ունենալ առնուազն փոխ-տասնապետ/տասնապետուիիի աստիճան:

ՊԱՐՏԱԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ

307. 735-

- ա) Կը կատարէ տասնեակի շաբաթական եւ շարքային աշխատանքները:
- բ) Կ'օգնէ տասնապետին վեց ամսուայ ծրագիրը մշակելու մէջ:
- գ) Կը մասնակցի փաղանգի Վարիչ Մարմնի ժողովին խորհրդակցական ձայնով:
- դ) Կը մասնակցի Մասնաճիւղի եւ միաւորի աստիճանաւորական ժողովներուն:
- ե) Կը մասնակցի Մասնաճիւղի սկաուտական խումբերու Վարիչ Մարմիններու ժողովին:
- զ) Կը մասնակցի փաղանգի ժողովին:
- է) Կը մասնակցի տասնեակի ժողովին:
- ը) Տասնեակի պատասխանատուի բացակայութեան կը կատարէ անոր լրիւ պարտականութիւնները:
- թ) Կը մասնակցի Մասնաճիւղի տարեկան Ընդհանուր ժողովին:

ժ) ԱՅԼ ՊԱՇՏՕՆՆԵՐ

307. 736-

Շրջանի սկաուտական բաժինէն ներս կան նաեւ տարբեր այլ պաշտօններ, որոնք կ'իյնան կազմակերպչականի եւ դաստիարակչականի բաժիններէն ներս, որոնց պայմանները, իրաւասութիւնները եւ պարտաւորութիւնները ճշդուած են շրջանի կազմակերպչականի եւ դաստիարակչականի աշխատանքներու կանոններով:

### 13. ԱՍՏԻՃԱՆԱԽՈՐԱԿԱՆ ԿԱԶՄ

307. 737- (176) Սկաուտական շարքերը կ'ունենան հետեւեալ աստիճանաւորական կազմերը, որոնք իրենց կարողութեան եւ փորձառութեանց համաձայն բաժնուած են զանազան աստիճաններու:

307. 738- (177) Զ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը ունի հետեւեալ աստիճանները.-

ԱՐԾՈՒԻԿ	ԱՐԵՆՈՅՇ	ՊԱՐՄԱՆՈՒՅԻ
Երամի Պետ Երամի Փոխ-Պետ Վարիչ Վեցեակապետուհի Վեցեակապետուհի Փոխ-Վեցեակապետուհի	Խմբապետուհի Փոխ-Խմբապետուհի Վարիչ Առաջնորդուհի Առաջնորդուհի Փոխ-Առաջնորդուհի	Խմբապետուհի Փոխ- Խմբապետուհի Տասնապետուհի Փոխ-Տասնապետուհի

ԳԱՅԼԻԿ	ԱՐԻ	ԵՐԵՑ
Վոհմակի Պետ Վոհմակի Փոխ-Պետ Վարիչ Վեցեակապետ Վեցեակապետ Փոխ-Վեցեակապետ	Խմբապետ Փոխ-Խմբապետ Վարիչ Առաջնորդ Առաջնորդ Փոխ-Առաջնորդ	Խմբապետ Փոխ-Խմբապետ Տասնապետ Փոխ-Տասնապետ

307. 739- (178) Յօդուած 177-ով (738) ճշդուած աստիճանաւորական կազմին նշանակումի պայմանները, պարտականութիւնները, պարտաւորութիւնները, իրաւասութիւնները եւ մարմիններու հետ յարաբերութիւնը իւրաքանչիւր շրջան կը տնօրինէ իր երկրի սկաուտական կանոններուն համաձայն: Այդ բոլորը պէտք է ամփոփուած ըլլան շրջանի Սկաուտական Ներքին Կանոնագրին մէջ:

307. 740- (179) Սկաուտական Աստիճանները մնայուն համզամանք ունին:

307. 741.- (180) Աստիճանը տիտղոս մըն է միայն եւ ենթակային իրաւական պատասխանատուութիւն չի տար:

307. 742- (181) Աստիճանաւոր մը իր պատասխանատուութիւնները կը ստանայ այն ատեն միայն, երբ կ'ունենայ նաեւ համապատասխան պաշտօն:

307. 743- Աստիճանաւոր մը եթէ ստացած պատասխանատուութեան համազօր աստիճան չունի կը ստանայ համապատասխան պաշտօնը եւ ապա աստիճանը:
307. 744- (182) Սկաուտ աստիճանաւորը կը գործադրէ իրմէ գերադաս գործօն աստիճանաւորին կամ պաշտօնի վրայ եղող սկաուտ պատասխանատուին հրահանգները:
307. 745- (183) Ժողովական որոշումները սկաուտական շարքերուն կը հասնին նուիրապետական կարգով:
307. 746- Սկաուտական շարքերէն ներս աստիճանը չափանիշ մըն է որ կը տրուի այն արժանի անդամին, որ ունի ճշդուած սկաուտական գիտելիքները, փորձառութիւնը, դիրքը, նախաձեռնութեան ոգին, ղեկավարի կարողութիւնը եւ միութեանական ոգին:
- Ծանօթ- Սկաուտական շարքերէն ներս աստիճանը կը գերադասէ համահաւասար պաշտօնին:
307. 747- Աստիճան կարելի է տալ այն սկաուտներուն, որոնք սկաուտական խումբերու մաս չեն կազմեր, բայց կ'օժանդակեն սկաուտական բաժանմունքին, այլ պաշտօններ ստանձնելով:
307. 748- Աստիճանը կը տրուի գրաւոր եւ յատուկ արարողութեամբ:

## ա) ԳԱՅԼԻԿՆԵՐՈՒ ԵՒ ԱՐԾՈՒԻԿՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՈՒՄ

### 1. ՓՈԽ-ՎԵՑԵԱԿԱՊԵՏ/ՎԵՑԵԱԿԱՊԵՏՈՒՅԻ

307. 749-  
 ա) իւրաքանչիւր վեցեակ կ'ունենայ մէկ փոխ-վեցեակապետ/վեցեակապետուհի:  
 բ) Կը նշանակուի վոհմակի/երամի Վարիչ Մարմին կողմէ եւ կը վաւերացուի Միաւորի Խմբապետական Մարմնին կողմէ:

### ՊԱՅՄԱՆՆԵՐ

307. 750-  
 ա) Պարտի նախապէս մէկ տարի գայլիկ/արծուիկ եղած ըլլալ:  
 բ) Ունենալ երկաստղ Կարգ եւ երկու մասնագիտական նշաններ:  
 գ) Կարողութիւն ունենալ ծրագրելու վեցեակի մակարդակի աշխատանքներ:

## ՊԱՐՏԱԻՈՒՌՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ

### ՅՕԴ. 751-

- ա) Կը տանի վեցեակին տրամադրուած ժամի աշխատանքները:
- բ) կը հսկէ վեցեակի վրայ, վեցեակապետի բացակայութեան:
- գ) Կը մասնակցի մասնաճիւղի, միաւորի, վոհմակի/երամի աստիճանաւորական ժողովներուն:
- դ) Կը մասնակցի վեցեակի ժողովներուն:

### 2. ՎԵՑԵԱԿԱՊԵՏ/ՎԵՑԵԱԿԱՊԵՏՈՒՅԻ

### ՅՕԴ. 752-

- ա) Իւրաքանչիւր վեցեակ կ'ունենայ մէկ վեցեակապետ/վեցեակապետուհի:
- բ) Կը նշանակուի վոհմակի/երամի Վարիչ Մարմնին կողմէ եւ կը վաւերացուի Միաւորի Խմբապետական Մարմնին կողմէ:

## ՊԱՅՄԱՆՆԵՐ

### ՅՕԴ. 753-

- ա) Պարտի նախապէս մէկ տարի գայլիկ/արծուիկ եղած ըլլալ:
- բ) Ունենալ երկաստղ կարգ եւ 5 մասնագիտական նշաններ:
- գ) Պարտի վեց ամիս փոխ-վեցեակապետ/վեցեակապետուհիի աստիճան ունենալ:
- դ) Կարողութիւն ունենալ ծրագրելու եւ հսկելու վեցեակի մակարդակի աշխատանքները:
- ե) Նախընտրաբար Հայերէն գրել եւ կարդալ գիտնալ:

## ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ

### ՅՕԴ. 754-

- ա) կ'որոշէ վեցեակի ուղեգիծը, նաեւ ծրագիրները:
- բ) կը ղեկավարէ եւ կը հսկէ վեցեակի վրայ:
- գ) կը վարէ վեցեակի ժողովները, Վարիչ վեցեակապետի ներկայութեամբ:
- դ) Կը մասնակցի մասնաճիւղի, միաւորի, վոհմակի/երամի աստիճանաւորական ժողովներուն:

### 3. ՎԱՐԻՉ ՎԵՑԵԱԿԱՊԵՏ/ՎԵՑԵԱԿԱՊԵՏՈՒՅԻ

307. 755-

- ա) Իւրաքանչիւր վոհմակ/երամ (չորս վեցեակ) կ'ունենայ երկու վարիչ վեցեակապետ/վեցեակապետուհի:
- բ) Կը նաշանակուի Միաւորի Խմբապետական Մարմնին կողմէ եւ կը վաւերացուի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին կողմէ:

#### ՊԱՅՄԱՆՆԵՐ

307. 756-

- ա) Պարտի մէկ տարի առաջնորդ/առաջնորդուհիի աստիճան ունեցած ըլլալ:
- բ) Պարտի 14 տարիքը ամբողջացուցած ըլլալ:
- գ) Ունենալ Ա. Կարգ եւ 7 մասնագիտական նշաններ:
- դ) Լաւատեղեակ ըլլալ շրջանի ներքին ծրագիր-կանոնագրին:
- ե) Նախընտրաբար Յայերէն գրել եւ կարդալ գիտնալ:

#### ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ

307. 757-

- ա) Կը համադրէ եւ կը ղեկավարէ վոհմակի/երամի աստիճանաւորները: (ԱՍՏԻՃԱՆԱԻՈՐՆԵՐԸ ԿԸ ՀԱՄԱԴՐՈՒԻ՞Ն)
- բ) Կը հսկէ վեցեակներու աշխատանքներուն եւ կ'օգնէ վեցեակապետ/վեցեակապետուհիներուն:
- գ) Վոհմակի/երամի ծրագիրներու գործադրման պատասխանատուն է:
- դ) Կը տանի վոհմակի/երամի շաբաթական եւ շաբթային աշխատանքները:
- ե) Կը մասնակցի վեցեակի ժողովին իբրեւ խորհրդատու:
- զ) Կը մասնակցի վոհմակի/երամի Վարիչ Մարմնի ժողովին, իրաւասու ձայնով:
- է) Կը մասնակցի Մասնաճիւղի միաւորի, վոհմակի/երամի աստիճանաւորական ժողովներուն:
- ը) Կը մասնակցի Մասնաճիւղի սկաուտական խումբերու Վարիչ Մարմնիններու ժողովին:
- թ) Կը մասնակցի վոհմակի/երամի ժողովին:

### 4. ՎՈՅՄԱԿԻ/ԵՐԱՄԻ ՓՈԽ-ՊԵՏ

307. 758-

- ա) Իւրաքանչիւր վոհմակ/երամ կ'ունենայ մէկ փոխ-պետ:
- բ) Կը նշանակուի միաւորի Խմբապետական Մարմնին կողմէ եւ կը վաւերացուի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ մարմնին կողմէ:

## ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՅՕԴ. 759-

- ա) Պարտի մէկ տարի վարիչ վեցեակապետ/վեցեակապետուհիի կամ համահաւասար աստիճան ունենալ:
- բ) Պարտի 15 տարիքը ամբողջացուցած ըլլալ:
- գ) Ունենալ վկայեալ կարգ եւ 10 մասնագիտական նշաններ:
- դ) Լաւատեղեակ ըլլալ շրջանի ներքին Ծրագիր-Կանոնագրին:
- ե) Կարելոր պաշտօն մը ստացած ըլլալ Մասնաճիւղի ընդհանուր աշխատանքներէն մէկուն եւ լաւագոյն ձեւով կատարած ըլլալ իր պաշտօնը:
- զ) Պարտի Հայերէն գրել եւ կարդալ գիտնալ:

## ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 760-

- ա) կ'օգնէ վոհմակի/երամի պետին, որոշելու վոհմակի/երամի ուղեգիծը, գործելակերպի ձեւը, պատրաստելու աշխատանքները, դեկավարելու ու հսկելու վոհմակի/երամի վրայ:
- բ) Վոհմակի/երամի պետի բացակայութեան կը կատարէ անոր լրիւ պարտականութիւնները:
- գ) Վոհմակի/երամի ուսուցումի (դաստիարակչական) պատասխանատուն է:
- դ) Կը մասնակցի վոհմակի/երամի Վարիչ Մարմնի ժողովին:
- ե) Կը մասնակցի մասնաճիւղի միաւորի, վոհմակի/երամի աստիճանաւորական ժողովներուն:
- զ) Կը մասնակցի Մասնաճիւղի սկաուտական խումբերու Վարիչ Մարմիններու ժողովին:
- է) Կը մասնակցի Մասնաճիւղի անդամական Ընդհանուր ժողովին:
- ը) Կը մասնակցի վոհմակի/երամի ժողովին:

## 5. ՎՈՅՄԱԿԻ ՊԵՏ/ԵՐԱՄԻ ՊԵՏ

ՅՕԴ. 761-

- ա) Իւրաքանչիւր վոհմակ/երամ կ'ունենայ մէկ պետ:
- բ) Կը նշանակուի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին ամ Սկաուտական Վարիչ Մարմին կողմէ եւ կը վաւերացուի Մասնաճիւղի Վարչութեան կողմէ:

## ՊԱՅՄԱՆՆԵՐ

### ՅՕԴ. 762-

- ա) Պարտի մէկ տարի վոհմակի/երամի փոխ-պետ կամ համահաւասար աստիճան ունենալ:
- բ) Պարտի 17 տարիքը ամբողջացուցած ըլլալ:
- գ) Ունենալ Արարատեան Կարգ:
- դ) Լաւատեղեակ ըլլալ շրջանի ներքին Ծրագիր-Կանոնագրին:
- ե) Պարտի Յայերէն գրել եւ կարդալ գիտնալ:

## ՊԱՐՏԱԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ

### ՅՕԴ. 763-

- ա) Վոհմակի/երամի ընդհանուր աշխատանքներու պատասխանատուն է:
- բ) Կը ծրագրէ վոհմակի/երամի 6 ամսուայ ծրագիրը, վոհմակի/երամի փոխ-պետի, նաեւ վարիչ վեցեակապետներու օգնութեամբ եւ կը ներկայացնէ Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին առ ի վաւերացում 2 ամիս նախքան նախորդող 6 ամսուայ շրջանի աւարտը:
- գ) Կ'որոշէ վոհմակի/երամի ուղեգիծը:
- դ) Կը վարէ վոհմակի/երամի Վարիչ Մարմնի ժողովը:
- ե) Կը մասնակցի Մասնաճիւղի եւ միաւորի աստիճանաւորական ժողովներուն:
- զ) Կը վարէ վոհմակի/երամի աստիճանաւորական ժողովը:
- է) Կը մասնակցի Մասնաճիւղի սկաուտական խումբերու Վարիչ Մարմիններու ժողովին:
- ը) Կը մասնակցի Մասնաճիւղի Խմբապետական Ընդհանուր ժողովին:
- թ) Կը մասնակցի Մասնաճիւղի անդամական Ընդհանուր ժողովին:
- ժ) Կը վարէ վոհմակի/երամի ժողովը:
- ժա) Կը մասնակցի միաւորի ժողովին:

## բ) ԱՐԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՐԵՆՈՅՇՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՈՒՄ

### 1. ՓՈԽ-ԱՌԱՋՆՈՐԴ/ԱՌԱՋՆՈՐԴՈՒՅԻ

### ՅՕԴ. 764-

- ա) Իւրաքանչիւր խմբակ կ'ունենայ մէկ փոխ-առաջնորդ/առաջնորդուհի:
- բ) Կը նշանակուի խումբի Վարիչ Մարմնին կողմէ եւ կը վաւերացուի միաւորի Խմբապետական Մարմնին կողմէ:



## ՊԱՅՄԱՆՆԵՐ

### ՅՕԴ. 765-

- ա) Պարտի նախապես մէկ տարի արի/արեւոյշ եղած ըլլալ:
- բ) Ունենալ նորընծայ Կարգ եւ երկու մասնագիտական նշաններ:
- գ) Պարտի 12 տարիքը ամբողջացուցած ըլլալ:
- դ) Կարողութիւն ունենալ ծրագրելու խմբակի մակարդակի աշխատանքներ:

## ՊԱՐՏԱԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ

### ՅՕԴ. 766-

- ա) Կը տանի խմբակին տրամադրուած ժամի աշխատանքները:
- բ) Կը հսկէ խմբակի վրայ, առաջնորդի բացակայութեան:
- գ) Կը մասնակցի Մասնաճիւղի, միաւորի, խումբի աստիճանաւորական ժողովներուն:
- դ) Կը մասնակցի խմբակի ժողովներուն:

## 2. ԱՌԱՋՆՈՐԴ/ԱՌԱՋՆՈՐԴՈՒՅԻ

### ՅՕԴ. 767-

- ա) Իւրաքանչիւր խմբակ կ'ունենայ մէկ առաջնորդ/առաջնորդուհի:
- բ) Կը նշանակուի խումբի Վարիչ Մարմնին կողմէ եւ կը վաւերացուի միաւորի խմբապետական Մարմնին կողմէ:

## ՊԱՅՄԱՆՆԵՐ

### ՅՕԴ. 768-

- ա) Պարտի նախապես երկու տարի արի/արեւոյշ եղած ըլլալ:
- բ) Ունենալ Բ. Կարգ եւ 4 մասնագիտական նշաններ:
- գ) Պարտի 13 տարիքը ամբողջացուցած ըլլալ:
- դ) Պարտի վեց ամիս փոխ-առաջնորդ/առաջնորդուհիի աստիճան ունեցած ըլլալ:
- ե) Կարողութիւն ունենալ ծրագրելու եւ հսկելու խմբակի մակարդակի աշխատանքները:
- զ) Նախընտրաբար Յայերէն գրել եւ կարդալ գիտնալ:

ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ

307. 769-

- ա) կ'որոշէ խմբակի ուղեգիծը, նաեւ ծրագիրները:
- բ) Կը ղեկավարէ եւ կը հսկէ խմբակի վրայ:
- գ) Կը վարէ խմբակի ժողովները վարիչ առաջնորդի ներկայութեամբ:
- դ) Կը մասնակցի Մասնաճիւղի, միաւորի, խումբի աստիճանաւորական ժողովներուն:

3. ՎԱՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴ/ԱՌԱՋՆՈՐԴՈՒՅԻ

307. 770-

- ա) Իւրաքանչիւր խումբ (չորս խմբակ) կ'ունենայ երկու վարիչ առաջնորդ/առաջնորդուհի:
- բ) Կը նշանակուի միաւորի խմբապետական Մարմնին կողմէ, եւ կը վաւերացուի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին կողմէ:

ՊԱՅՄԱՆՆԵՐ

307. 771-

- ա) Պարտի մէկ տարի առաջնորդ/առաջնորդուհիի աստիճան ունեցած ըլլալ:
- բ) Պարտի 14 տարիքը ամբողջացուցած ըլլալ:
- գ) Ունենալ Ա. կարգ եւ 7 մասնագիտական նշաններ:
- դ) Լաւատեղեակ ըլլալ շրջանի ներքին Կանոնագրին:
- ե) Նախընտրաբար Յայերէն գրել եւ կարդալ գիտնալ:

ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ

307. 772-

- ա) Կը համադրէ եւ կը ղեկավարէ խմբակներու աստիճանաւորներու աշխատանքները:
- բ) Կը հսկէ խմբակներու աշխատանքներուն եւ կ'օգնէ առաջնորդ/առաջնորդուհիներուն:
- գ) Խումբի ծրագիրներու գործադրման պատասխանատուն է:
- դ) Կը տանի խումբի շաբաթական եւ շարքային աշխատանքները:
- ե) Կը մասնակցի խմբակի ժողովին իբրեւ խորհրդատու:
- զ) Կը մասնակցի խումբի Վարիչ Մարմնի ժողովին:
- է) Կը մասնակցի Մասնաճիւղի, միաւորի եւ խումբի աստիճանաւորական ժողովներուն:
- ը) Կը մասնակցի Մասնաճիւղի սկաուտական խումբերու Վարիչ Մարմիններու ժողովին:
- թ) Կը մասնակցի խումբի ժողովին:

#### 4. ՓՈԽ-ԽՄԲԱՊԵՏ/ԽՄԲԱՊԵՏՈՒՅԻ

307. 773-

- ա) Իւրաքանչիւր խումբ կ'ունենայ մէկ փոխ-խմբապետ/խմբապետուհի
- բ) Կը նշանակուի միաւորի խմբապետական Մարմնին կողմէ եւ կը վաւերացուի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին կողմէ:

#### ՊԱՅՄԱՆՆԵՐ

307. 774-

- ա) Պարտի մէկ տարի վարիչ առաջնորդ/առաջնորդուհիի կամ համահաւասար աստիճան ունեցած ըլլալ:
- բ) Պարտի 15 տարիքը ամբողջացուցած ըլլալ:
- գ) Ունենալ վկայեալ կարգ եւ 10 մասնագիտական նշաններ:
- դ) Լաւատեղեակ ըլլալ շրջանի ներքին ծրագիր-Կանոնագրին:
- ե) Կարելոր պաշտօն մը ստացած ըլլալ Մասնաճիւղի ընդհանուր աշխատանքներէն մէկուն եւ լաւագոյն ձեւով կատարած ըլլալ իր պաշտօնը:
- զ) Պարտի հայերէն գրել եւ կարդալ գիտնալ:

#### ՊԱՐՏԱԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ

307. 775-

- ա) կ'օգնէ խումբի խմբապետ/խմբապետուհիին որոշելու խումբի ուղեգիծը, պատրաստելու աշխատանքները, ղեկավարելու ու հսկելու խումբի վրայ:
- բ) Խումբի խմբապետ/խմբապետուհիի բացակայութեան կը կատարէ անոր լրիւ պարտականութիւնները:
- գ) Խումբի ուսուցումի (դաստիարակչական) պատասխանատուն է:
- դ) Կը մասնակցի խումբի Վարիչ Մարմնի ժողովին:
- ե) Կը մասնակցի Մասնաճիւղի միաւորի, խումբի աստիճանաւորական ժողովներուն:
- զ) Կը մասնակցի Մասնաճիւղի սկաուտական խումբերու Վարիչ Մարմնիններու ժողովին:
- է) Կը մասնակցի Մասնաճիւղի անդամական Ընդհանուր ժողովին:
- ը) Կը մասնակցի խումբի ժողովին:

#### 5. ԽՄԲԱՊԵՏ/ԽՄԲԱՊԵՏՈՒՅԻ

307. 776-

- ա) Իւրաքանչիւր խումբ կ'ունենայ մէկ խմբապետ/խմբապետուհի:
- բ) Կը նշանակուի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին կողմէ եւ կը վաւերացուի Մասնաճիւղի Վարչութեան կողմէ:

## ՊԱՅՄԱՆՆԵՐ

### ՅՕԴ. 777-

- ա) Պարտի մէկ տարի խումբի փոխ-խմբապետ/խմբապետուհիի կամ համահաւասար աստիճան ունենալ:
- բ) Պարտի 17 տարիքը ամբողջացուցած ըլլալ:
- գ) Ունենալ Արարատեան Կարգ:
- դ) Լաւատեղեակ ըլլալ շրջանի ներքին ծրագիր-կանոնագրին:
- ե) Պարտի Հայերէն գրել եւ կարդալ գիտնալ:

## ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ

### ՅՕԴ. 778-

- ա) Խումբի ընդհանուր աշխատանքներու պատասխանատուն է:
- բ) Կը ծրագրէ խումբի 6 ամսուայ ծրագիրը, խումբի փոխ-խմբապետ/խմբապետուհիի նաեւ վարիչ առաջնորդ/առաջնորդուհիներու օգնութեամբ եւ կը ներկայացնէ Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին առ ի վաւերացում 2 ամիս նախքան նախորդող 6 ամսուայ շրջանի աւարտը:
- գ) Կ'որոշէ խումբի ուղեգիծը:
- դ) Կը վարէ խումբի Վարիչ Մարմնի ժողովը:
- ե) Կը մասնակցի Մասնաճիւղի եւ միաւորի աստիճանաւորական ժողովներուն:
- զ) Կը վարէ խումբի աստիճանաւորական ժողովը:
- է) Կը մասնակցի Մասնաճիւղի սկաուտական խումբերու Վարիչ Մարմիններու ժողովին:
- ը) Կը մասնակցի Մասնաճիւղի խմբապետական Ընդհանուր ժողովին:
- թ) Կը մասնակցի Մասնաճիւղի անդամական Ընդհանուր ժողովին:
- ժ) Կը վարէ խումբի ժողովը:
- ժա) Կը մասնակցի միաւորի ժողովին:

## գ) ԵՐԷՑՆԵՐՈՒ ԵՒ ՊԱՐՄԱՆՈՒՅԻՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՈՒՄ

### 1. ՓՈԽ-ՏԱՍՆԱՊԵՏ/ՏԱՍՆԱՊԵՏՈՒՅԻ

307. 779- Կ'աաջարկուի փաղանքի Վարիչ Սարմնին կողմէ եւ կը վաւերացուի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Սարմնին կողմէ:

#### ՊԱՅՄԱՆՆԵՐ

307. 780- Երբ երէց կամ պարմանուհի մը կը լրացնէ հետեւեալ պայմանները, թեկնածու կ'ըլլայ ստանալու փոխ-տասնապետ/տասնապետուհիի աստիճան:

- ա) Պարտի 16 տարիքը ամբողջացուցած ըլլալ:
- բ) Ունենալ Սարգումի Շրջան կարգը եւ 5 մասնագիտական նշաններ:
- գ) Լաւատեղեակ ըլլալ շրջանի ներքին Ծրագիր-Կանոնագրին:
- դ) Նախընտրաբար Յայերէն գրել եւ կարդալ գիտնալ:

#### ՊԱՐՏԱԻՐՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ

307. 781-

- ա) Կը մասնակցի Մասնաճիւղի անդամական Ընդհանուր Ժողովին:
- բ) Կը մասնակցի Մասնաճիւղի, միաւորի, փաղանգի աստիճանաւորական ժողովին:
- գ) Կը մասնակցի միաւորի ժողովին:
- դ) Կը մասնակցի փաղանգի ժողովին:
- ե) Կը մասնակցի Մասնաճիւղի սկաուտական խումբերու Վարիչ Սարմնիներու ժողովին:
- զ) Կը մասնակցի տասնեակի ժողովին:

### 2. ՏԱՍՆԱՊԵՏ/ՏԱՍՆԱՊԵՏՈՒՅԻ

307. 782- Կ'առաջարկուի փաղանգի Վարիչ Սարմնին կողմէ եւ կը վաւերացուի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Սարմնին կողմէ:

#### ՊԱՅՄԱՆՆԵՐ

307. 783- Երբ երէց կամ պարմանուհի մը կը լրացնէ հետեւեալ պայմանները, թեկնածու կ'ըլլայ ստանալու տասնապետ/տասնապետուհիի աստիճան:

- ա) Պարտի վեց ամիս փոխ-տասնապետի/փոխ-տասնապետուհիի աստիճան ունենալ:

- բ) Պարտի 16 տարիքը ամբողջացուցած ըլլալ:
- գ) Ունենալ Ընդհանուր Ծառայութեան Շրջան կարգը եւ 5 մասնագիտական նշաններ:
- դ) Լաւատեղեակ ըլլալ շրջանի եւ Մասնաճիւղի ներքին ծրագիր-կանոնագրին:
- ե) Նախընտրաբար Հայերէն գրել եւ կարդալ գիտնալ:

**ՊԱՐՏԱԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ**

**ՅՕԴ. 784-**

- ա) Կը մասնակցի Մասնաճիւղի անդամական Ընդհանուր ժողովին:
- բ) Կը մասնակցի Մասնաճիւղի, միաւորի, փաղանգի աստիճանաւորական ժողովին:
- գ) Կը մասնակցի միաւորի ժողովին:
- դ) Կը մասնակցի փաղանգի ժողովին:
- ե) Կը մասնակցի Մասնաճիւղի սկաուտական խումբերու Վարիչ Մարմիններու ժողովին:
- զ) Կը մասնակցի տասնեակի ժողովին:

**3. ՓԱՂԱՆԳԻ ՓՈԽ-ԽՄԲԱՊԵՏ/ԽՄԲԱՊԵՏՈՒՅԻ**

**ՅՕԴ. 785-**

- ա) Իւրաքանչիւր փաղանգ կ'ունենայ մէկ փոխ-խմբապետ/խմբապետուհի:
- բ) Կը նշանակուի միաւորի խմբապետական Մարմին կողմէ եւ կը վաւերացուի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմին կողմէ:

**ՊԱՅՄԱՆՆԵՐ**

**ՅՕԴ. 786-**

- ա) Պարտի մէկ տարի տասնապետ/տասնապետուհիի կամ վարիչ առաջնորդ/առաջնորդուհիի կամ վարիչ վեցեակապետ/վեցեակապետուհիի աստիճան ունենալ:
- բ) Պարտի 17 տարիքը ամբողջացուցած ըլլալ:
- գ) Ունենալ վկայեալ կարգ:
- դ) Լաւատեղեակ ըլլալ շրջանի ներքին Ծրագիր-Կանոնագրին:
- ե) Կարելոր պաշտօն մը ստացած ըլլալ Մասնաճիւղի ընդհանուր աշխատանքներէն մէկուն եւ լաւագոյն ձեւով կատարած ըլլալ իր պաշտօնը:
- զ) Պարտի Հայերէն գրել եւ կարդալ գիտնալ:

**ՊԱՐՏԱԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ**

**ՅՕԴ. 787-**

- ա) Կ'օգնե փաղանգի խմբապետ/խմբապետուհիին, որոշելու փաղանգի ուղեգիծը, պատրաստելու աշխատանքները, ղեկավարելու ու հսկելու փաղանգի վրայ:
- բ) Փաղանգի խմբապետ/խմբապետուհիի բացակայութեան կը կատարե անոր լրիւ պարտականութիւնները:
- գ) Փաղանգի ուսուցումի (դաստիարակչական) պատասխանատուն է:
- դ) Կը մասնակցի փաղանգի Վարիչ Մարմնի ժողովին:
- ե) Կը մասնակցի Մասնաճիւղի, միաւորի, փաղանգի աստիճանաւորական ժողովներուն:
- զ) Կը մասնակցի Մասնաճիւղի սկաուտական խումբերու Վարիչ Մարմիններու ժողովին:
- է) Կը մասնակցի Մասնաճիւղի անդամական Ընդհանուր ժողովին:
- ը) Կը մասնակցի փաղանգի ժողովին:

#### 4. ՓԱՂԱՆԳԻ ԽՄԲԱՊԵՏ/ԽՄԲԱՊԵՏՈՒԻՅԻ

##### ՅՕԴ. 788-

- ա) Իւրաքանչիւր փաղանգ կ'ունենայ մէկ խմբապետ/խմբապետուհի:
- բ) Կը նշանակուի Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին կողմէ եւ կը վաւերացուի Մասնաճիւղի Վարչութեան կողմէ:

#### ՊԱՅՄԱՆՆԵՐ

##### ՅՕԴ. 789-

- ա) Պարտի երկու տարի փաղանգի փոխ-խմբապետ/խմբապետուհիի կամ համահաւասար աստիճան ունենալ:
- բ) Պարտի 19 տարիքը ամբողջացուցած ըլլալ:
- գ) Ունենալ Արարատեան Կարգ:
- դ) Լաւատեղեակ ըլլալ շրջանի Ներքին Ծրագիր-Կանոնագրին:
- ե) Պարտի Հայերէն գրել եւ կարդակ գիտնալ:

#### ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ

##### ՅՕԴ. 790-

- ա) Փաղանգի ընդհանուր աշխատանքներուն պատասխանատուն է:
- բ) Կը ծրագրե փաղանգի մէկ տարուայ ծրագիրը, փաղանգի փոխ-խմբապետ/խմբապետուհիի, տասնեակներու պատասխանատու/պատասխանատուիներու եւ փոխ-պատասխանատու/պատասխանատուիներու օգնութեամբ եւ կը ներկայացնէ Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կամ Սկաուտական Վարիչ Մարմնին առ ի վաւերացում 2 ամիս նախքան նախորդող տարուայ ծրագրի աւարտը:
- գ) կ'որոշե փաղանգի ուղեգիծը:
- դ) կը վարե փաղանգի ժողովը:

- ե) Կը վարէ փաղանգի աստիճանաւորական ժողովը:
- զ) Կը վարէ փաղանգի Վարիչ Մարմնի ժողովը:
- է) Կը մասնակցի միաւորի ընդհանուր ժողովին:
- ը) Կը մասնակցի միաւորի աստիճանաւորական ժողովին:
- թ) Կը մասնակցի միաւորի խումբերու Վարիչ Մարմիններու ժողովին:
- ժ) Կը մասնակցի Մասնաճիւղի աստիճանաւորական ժողովին:
- ժա) Կը մասնակցի Մասնաճիւղի Սկաուտական խումբերու Վարիչ Մարմիններու ժողովին:
- ժբ) Կը մասնակցի Մասնաճիւղի Խմբապետական Ընդհանուր ժողովին:
- ժգ) Կը մասնակցի Մասնաճիւղի անդամական տարեկան Ընդհանուր ժողովին:



## 14. ՄԿԱՌՈՒՏԱԿԱՆ ՇԱՐՔԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

**Ծանոթ-** Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանի սկաուտական բաժանմունքէն ներս (բաժանում) բառը կը գործածուի փոխանակ (բաժանմունք) բառը սկաուտական ենթաբաժանմունքներու համար:

ՅՕԴ. 791- (184) Զ.Մ.Ը.Մ.Ի սկաուտութիւնը կը բաղկանայ խումբերէ, որոնց կառոյցը հետեւեալն է.-

### Սկաուտական բաժանումներն են.-

- Գայլիկական վոհմակ
- Արծուիկներու երամ
- Արիններու խումբ
- Արենոյշներու խումբ
- Երեցական փաղանգ
- Պարմանուհիներու փաղանգ

### Ա- Գայլիկներու բաժանում

1. Գայլիկները կը կազմեն վոհմակը:
2. Վոհմակը կը բաղկանայ չորս վեցեակներէ:
3. Վեց գայլիկներ կը կազմեն վեցեակը:
4. Իւրաքանչիւր վեցեակ կ'ունենայ փոխ-վեցեակապետ եւ վեցեակապետ մը: Անոնք կը վարեն վեցեակի գործունէութիւնը:
5. Երկու վեցեակներ կ'ունենան մէկ վարիչ վեցեակապետ:
6. Վոհմակը կ'ունենայ վոհմակի պետ (ուսուցումի պատասխանատու) եւ վոհմակի երկու փոխ-պետեր (խաղերու եւ գործնական աշխատանքներու պատասխանատու):
7. Վոհմակը կ'ունենայ առաւելագոյնը 35 անդամ:
8. Վոհմակը կը բնորոշուի թիւով, իսկ վեցեակը՝ գոյնով:

### Բ- Արծուիկներու բաժանում

1. Արծուիկները կը կազմեն երամը:
2. Երամը կը բաղկանայ չորս վեցեակներէ:
3. Վեց արծուիկներ կը կազմեն վեցեակը:
4. Իւրաքանչիւր վեցեակ կ'ունենայ փոխ-վեցեակապետուհի եւ վեցեակապետուհի մը: Անոնք կը վարեն վեցեակի գործունէութիւնը:
5. Երկու վեցեակներ կ'ունենան մէկ վարիչ վարիչ վեցեակապետուհի:
6. Երամը կ'ունենայ երամի պետ (ուսուցումի պատասխանատու) եւ երկու փոխ-պետեր (խաղերու եւ գործնական աշխատանքներու պատասխանատու):

7. Երամը կ'ունենայ առաւելագոյնը 35 անդամ:
8. Երամը կը բնորոշուի թիւով, իսկ վեցեակը՝ գոյնով:

**Գ- Արիներու կամ Արենոյշներու բաժանում**

1. Արիները կամ արենոյշները կը կազմեն խումբը:
2. Խումբը կը բաղկանայ չորս խմբակներէ:
3. Առաւելագոյնը 8 արիներ կամ արենոյշներ կը կազմեն խմբակը:
4. Առաջնորդ/Առաջնորդուհի մը եւ փոխ-առաջնորդ/փոխ-առաջնորդուհի մը կը վարեն խմբակը:
5. Երկու խմբակներ կ'ունենան վարիչ առաջնորդ/ վարիչ առաջնորդուհի մը:
6. Խումբը կ'ունենայ փոխ-խմբապետ/փոխ-խմբապետուհի եւ խմբապետ/խմբապետուհի մը:
7. Խումբը կ'ունենայ առաւելագոյնը 45 անդամ:
8. Խումբը կը զատորոշուի թիւով, իսկ խմբակը՝ կենդանիի անունով:

**Դ- Երեցներու կամ Պարմանուհիներու բաժանում**

1. Երեցները կամ պարմանուհիները կը կազմեն փաղանգը:
2. Տասը երեցներ կամ պարմանուհիներ կը կազմեն տասնեակը:
3. Տասնեակը կը վարեն փոխ-տասնապետ/փոխ-տասնապետուհի եւ տասնապետ/տասնապետուհի մը:
4. Փաղանգը կ'ունենայ առաւելագոյնը 30 անդամ:
5. Փաղանգը կ'ունենայ փոխ-խմբապետ/փոխ-խմբապետուհի մը եւ խմբապետ/ խմբապետուհի մը:
6. Փաղանգը եւ տասնեակը՝ կ'ունենան պատմական անուն:

**ԾԱՆՕԹ.-** Վերոյիշեալ դասաւորումները ընդհանուր բնոյթ ունին: Իւրաքանչիւր շրջան կը պատշաճի իր երկրի կանոններուն՝ մեկնաբանուած Շրջանի Ներքին Կանոնագրով:

**ՅՕԴ. 792-** **Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանէն ներս: Գայլիկներու բաժանումէն ներս, վարիչ վեցեակապետը կարելի է փոխարինել Վարիչ վեցեակապետուհիով:**

**ՅՕԴ. 793.-** **Յօդուած 184ով սահմանուած կառոյցը կը կազմէ սկաուտական միաւորը:**  
(185)

307. 794-  
186)

Նոր միաւոր մը կաերլի է կազմել երկու ձեւով.-

ա)

Երկու կամ երեք սկաուտական բաժանումներէ (օրինակ՝ վոհմակ, խումբ, փաղանգ):

բ)

Նոյն բաժանումէն նուազագոյնը երկու կազմերէ (օրինակ՝ գայլիկական երկու վոհմակ):

307. 795-  
(187)

Հ.Մ.Ը.Մ.ի անունով սկաուտական բաժանումներ կազմելու համար հարկ է ունենալ Մասնաճիւղի Վարչութեան կամ անոր նշանակած Սկաուտական Խորհուրդի արտօնութիւնը եւ ենթակայ ըլլալ անոր որոշումներուն:

## 15. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԺԱԿԱՆ

- (տեսնել նաև ընդհանուր Ծրագիր կանոնագրի Յօդ. 107-էն 120, էջ 30-33)
307. 796- (188) Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր Ծրագիր-Կանոնագրին եւ ոգիին, սկաուտական սկզբունքներուն եւ Ծրագիր-Կանոնագրին դէմ գործող սկաուտական շարքերու իւրաքանչիւր անդամ կ'ենթարկուի իր գործած յանցանքին համապատասխան պատիժի:
307. 797- (189) Կարգապահական տեսակէտով, սկաուտական շարքերու ամէն անդամ պատասխանատու է այն մարմինին կամ ժողովին, որուն իրաւասութեան դէմ յանցանք գործած է:
307. 798- (190) Պատժական ամէն որոշում պէտք է առնուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:
- ԾԱՆՕԹ.-
- ա) Բացի սկաուտական պատիժներու առաջին երեք կէտերէն (տես Յօդ. 807 (198), էջ 74) որոնք կրնան տրուիլ նաեւ խումբի պատասխանատուին կողմէ (դիտողութիւն, յանդիմանութիւն, խումբի գործունէութեան օգտակար եղող աշխատանքներու յաւելեալ կատարում):
- բ) Պատժական տնօրինումներու բեկանումի պարագային, որոշումը պէտք է տրուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:
307. 799- (191) Կարգապահական պատիժներու դէմ կարելի է բողոքել.-
- ա) Պատժական որոշումի հաղորդումէն մինչեւ 2 ամիս:
- բ) Պատժական որոշումը տուած մարմինին անմիջականօրէն գերադաս մարմինին:
307. 800- (192) Դատավճիռի մը դէմ մամուլի միջոցով կամ հանրային բեմերէ բողոքողը կը զրկուի իր դատը գերադաս ժողովին կամ մարմինին ներկայացնելու իրաւունքէն:
307. 801- (193) Դատավճիռի մը դէմ բողոքը կը ներկայացուի պատիժը որոշող մարմինին կամ ժողովին միջոցով:
307. 802- (194) Բողոքառու մարմինը կամ ժողովը.-
- ա) Հարցը կրնայ քննել ինք կամ քննութիւնը յանձնել յատուկ դատական ատեանի մը:

- բ) Պարտաւոր է լսել պատիժը սահմանած մարմինը եւ պատժուած անդամը:
- գ) Անոր որոշումները վերջնական են:
307. 803- (195) Բոլոր պատիժները ենթակային կը հաղորդուին գրաւոր եւ նուիրապետական կարգով:
307. 804- (196) Սկաուտական շարքերու աստիճանաւորը կը դատուի իր պաշտօնը վաւերացուցած մարմինին կամ ժողովին կողմէ:
307. 805- Սկաուտական շարքերէն ներս ունի անձի մարմնական կամ հոգեկան վնաս հասցնող պատիժ արտօնուած չէ (օրինակ՝ ծեծել, կապել, բանտարկել, վախցնել, չափէն աւելի յոգնեցնել եւ այլն):
307. 806- (197) Զ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը ունի երկու ձեւի պատիժներ.-  
Ա.- Սկաուտական  
Բ.- Միութենական
307. 807- (198) Սկաուտական պատիժներն են.-  
1.- Դիտողութիւն (բերանացի կամ գրաւոր).  
2.- Յանդիմանութիւն (բերանացի կամ գրաւոր).  
3.- Խումբի գործունէութեան օգտակար եղող աշխատանքներու յաւելեալ կատարում (ջուր կրել, փայտ հաւաքել, բանակատեղին եւ սկաուտական սենեակը մաքրել ու նման այլազան աշխատանքներ, որոնք կրնան օգտակար ըլլալ խումբի գործունէութեան):
- ԾԱՆՕԹ.-  
Այս պատիժները (1-3) կը տնօրինուին պատասխանատու աստիճանաւորին կամ մարմինին կողմէ:
- 4.- Կախակայում սկաուտական աշխատանքներէ.  
Սկաուտը կը զրկուի սկաուտական աշխատանքներուն մասնակցելէ, բայց կը կատարէ իրեն տրուած բոլոր պարտականութիւնները: Այս պատիժը կը տրուի առաւելագոյնը չորս շաբթուան համար:
- 5.- Փողկապ կրելու իրաւունքէն զրկում.  
Կախակայուած սկաուտը երբ կը կրկնէ իր գործած յանցանքը, կը զրկուի փողկապ կրելու իրաւունքէն առաւելագոյնը չորս շաբաթ: Այս պատիժը կը նշանակէ թէ զրկուած է սկաուտական բոլոր իրաւունքներէն, բայց գերծ չէ կացուցուած իր պարտաւորութիւններէն:
- 6.- Աստիճանագրկում/պաշտօնագրկում.  
Երբ աստիճանաւորը իր կոչումին վայել բարձրութեան վրայ չի գտնուիր վարչական անկարողութեան, բարոյական սայթաքումի եւ այլ

պատճառներով, իրեն վստահուած աստիճանը/պաշտօնը ետ կ'առնուի: Ենթացումը կը տնօրինուի աստիճանաւորին գործունէութիւնը հակակշռող մարմինին կամ ժողովին կողմէ:

- 7.- Դադրեցում սկաուտական շարքերէն.  
Յաճախակի պատիժներու ենթարկուած սկաուտը, որ իր ընթացքով կը խանգարէ խումբին աշխատանքները, կը դադրեցուի սկաուտական շարքերէն:
- 8.- Միութենական շարքերէն հեռացումի առաջարկ.  
Միութեան գոյքը իւրացնող, միւթական եւ բարոյական սայթաքումներ ունեցած սկաուտին համար նուիրապետական կարգերով կրնայ պահանջուիլ Միութեան շարքերէն հեռացում: Այս պահանջը կրնայ բանաձեւել Շրջանային Սկաուտական Խորհուրդը միայն, քննելէ ետք ենթակային պարագան եւ լսելէ ետք անոր բացատրութիւնները: Պատիժը կը սահմանուի Շրջանային Վարչութեան կողմէ, լսելէ ետք Շրջանային Սկաուտական Խորհուրդի գրաւոր զեկուցումը եւ ենթակային գրաւոր բացատրութիւնները:

**ՅՕԴ. 808-** Զ.Ս.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանէն ներս, պատասխանատու աստիճանաւորին կամ մարմնին կը տնօրինուի օգտագործել հետեւեալ միջոցները:

- 1.- Աշխատանքի օրուայ ծրագիրէն անհատի սիրած աշխատանքի զրկում:
- 2.- Մտային գրաւոր աշխատանքով մը պատժել (օրինակ՝ թուաբանական մրցումներ, Զայերէն լեզուով էջ մը նախադասութիւններ գրել, եւ այլն):

**ՅՕԴ. 809-** Սկաուտ մը կարելի է պատժական տնօրինումի ենթարկել եթէ՝

- 1.- Զ.Ս.Ը.Մ.ի սկաուտական ժողովներու որոշումներուն եւ պատասխանատուներուն հրահանգներուն չենթարկուեցաւ:
- 2.- Տարեշրջանի ընթացքին շարունակաբար եւ առանց բանաւոր պատճառի աշխատանքներէն եւ ժողովներէն բացակայեցաւ:
- 3.- Թերացաւ միւթական պարտականութիւնը կատարելէ:
- 4.- Զ.Ս.Ը.Մ.ի դրամը կամ գոյքը ոչ Զ.Ս.Ը.Մ.ի կամ աշխատանքներու համար օգտագործեց:
- 5.- Զ.Ս.Ը.Մ.ի գոյքը կամ դրամը իւրացուց:
- 6.- Զ.Ս.Ը.Մ.ի գոյքերը կամ վայրը պղծեց կամ փճացուց:
- 7.- Զ.Ս.Ը.Մ.ի ընդհանուր կամ Շրջանի ներքին Ծրագրի-կանոնագրի դէմ մեղանչեց:
- 8.- Զ.Ս.Ը.Մ.ի կամ ղեկավար Մարմիններու դէմ գրաւոր կամ բանաւոր պայքար մղեց:
- 9.- Ռեւէ մէկ խնդիր հակականոնագրային ձեւով հետապնդեց:
- 10.- Իր ընթացքով եւ կամ կեցուածքով Զ.Ս.Ը.Մ.ի անունին վնաս հասցուց:
- 11.- Մասնակցեցաւ սկաուտական աշխատանքներուն (ներքին կամ արտաքին) առանց Զ.Ս.Ը.Մ.ի որոշած տարազին եւ կամ արտօնուած տարազի:

307. 810- (199) Վերոյիշեալ պատիժները (բացի 307. 198 -ուրերորդէն) սկաուտական են եւ սկաուտը չեն գրկեր Միութենական այլ գործունէութենէ: Անոնք կը վերաբերին 18էն վար տարիք ունեցող սկաուտներուն:
307. 811- (200) Միութենական պատիժներու մեկնաբանութիւնը կը կատարուի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագրի տրամադրութեանց համաձայն:
307. 812- (201) Միութենական պատիժները կը տնօրինուին Սասնաճիւղի, Շրջանային կամ Կեդրոնական Վարչութեանց կողմէ, անոնց նշանակած սկաուտական մարմիններուն առաջարկով:

## 16. ՏԱՐԱԶՆԵՐ ԵՒ ԳՈՅՔԵՐ

307. 813- (202) Զ.Ս.Ը.Մ.Ի սկաուտական շարքերուն տարազները կ'որոշէ Կեդրոնական Վարչութիւնը:  
Երբ երկրի մը Զ.Ս.Ը.Մ.Ի Սկաուտները պարտաւորուած են կրելու տեղւոյն սկաուտական տարազները, հնարաւորութեան սահմաններուն մէջ պէտք է կրեն Զ.Ս.Ը.Մ.Ի գօտին, Զ.Ս.Ը.Մ.Ի նշանակը՝ գլխարկին վրայ եւ Զ.Ս.Ը.Մ.Ի սկաուտական շուշանածաղիկը՝ ձախ կուրծքին վրայ եւ եռագոյն երիզ մը աջ գրպանին վերեւ:
307. 814- (203) Սկաուտը իր տարազին վրայ կրնայ կրել Սկաուտական Ներքին Կանոնագրով արտօնուած նշաններ:
307. 815- (204) Սկաուտական խումբերը կ'ունենան իրենց յատուկ կազմածներն ու գոյքերը, որոնք Միութեան սեփականութիւնն են:
307. 816- Սկաուտական գոյքերու ցանկագրումի, պահպանումի եւ գործածութեան մանրամասնութիւնները տեսնել շրջանի սկաուտական կազմակերպչական աշխատանքներու կանոններուն մէջ:

### ԳԱՅԼԻԿ/ԱՐԾՈՒԻԿՆԵՐՈՒ ՏԱՐԱԶ

307. 817- Գայլիկ/Արծուիկներու տարազը կ'ըլլայ հետեւեալ ձեւով:
- ա. Գլխարկ  
Գայլիկական գլխարկ, ետեւի մասը գոց կապոյտ, իսկ առջեւը դեղին: Գայլիկ-Արծուիկները իրաւունք կը ստանան գլխարկ կրելու կակուղ թաթիկ կարգը ստանալէ ետք:
  - բ. Նշանակ  
Շինուած կ'ըլլայ գոց կապոյտ կերպասի մէջ, գայլի դեղին գլուխով (Գայլիկներու համար) կամ արծուի դեղին գլուխով (արծուիկներու համար), կը դրուի գլխարկին դիմացի դեղին մասին ճիշդ կեդրոնը, երեք չորրորդ ինչ մեծութեամբ:
  - գ. Շապիկ  
Գոց կապոյտ, օձիքով, երկու գրապաններով եւ ուսնոցներով:
  - դ. Փողկապ (թաշկինակ)  
Մասնաճիւղի մը առաջին Գայլիկներու վոհմակին եւ արծուիկներու երամին փողկապ(թաշկինակ)ը կ'ըլլայ դեղին կերպաս շուրջը կապոյտ երիզ:



Յաջորդող վոհմակներու եւ երամներու փողկապ(թաշկինակ)ները կ'ունենան տարբեր երկու գոյներ ամէն մէկ վոհմակի եւ երամի որոնք կ'որոշուին մասնաճիւղին կողմէ:

